Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19511
19512
19513
19514
19515
19516
19517

891.99
Ф-34

H.M. SETIAN
PETERIE ET ATELIER DE RELIURE
ONSTANTINOPLE
chakmakdjilar Yokouch

ՍՏԵՓԱՆ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

Գրական Շիթեր

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐ

1884-1892

معارف نظارت جلیله‌سنك ٦٢٢ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1892

ՍՏԵՓԱՆ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

Գրական Շիթեր

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐ

1884-1892

معارف نظارت جلیله‌سنك ٦٣٢ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1892

4525

585
40



Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՆԻՈՑ ԻՄՈՑ ՍԻՐԵԼԻՈՑ

ԵՒ

ՀՕՐ ՏԱՐԱԲԱՂԴԻ

ՄԱՀԱՐՁԱՆ

ՅԱՒԷՐԺԱԿԱՆ ՎՇՏԻ

ԵՒ

ԱՆՅԱՄԱՓԵԼԻ ԱՐՏԱՍՈՒԱՑ

ԵԱԽԵՐԳԱՆՔ

Քնարն ընտրեցի ինձ եւեթ գործի. որով կը թրթռացնեմ սրտիս զգացումներն, յոյզերն եւ տրոփումներն։ Զը կարծէք թէ քնարս խաղցրալուր է եւ զուարթախօս, այլ թեկեալ եւ տխրահնչակ. նոնուոյ մը սգաստեսիլ տերեւներով պատած կը ներկայանայ ձեզ։

Ցաւակնութիւն չունիմ ըսելու թէ գրական ծաղկանց վրայ հաս մ'ալ պիտի յաւելում. զի արդէն շատ իսկ են, որ գրական ասպարէզն կ'ողողեն իրենց աղուշաբոյր հոտով եւ չքնաղ տեսքով, այլ դուզնաքեայ վաստակոցս չնչին արգասիքն եղող մելամաղձիկ տողեր, զորս պարագայք աստ եւ անդ ներշնչեցին ինձ։

Բանաստեղծն բնութեան նկարիչն է. որ իւր նարտար վրձնոյն տակ ամեն ինչ կը կերպաւորէ, կը գունաւորէ ու կը կենդանացնէ. Անտի կ'առնու թռչունն իւր նուրոյ, սոխակն՝ իւր դայլայլ, առուակն՝ իւր մրմունջ, մեղուն՝ իւր բզզիւն, ծաղիկն՝ իւր բոյր, հովիկն՝ իւր սոյլ, մարգն՝ իւր դալարութիւն. եւ իրաքանչիւրն իրենց արտայայտութեան յատուկ շեշտերով կ'երգեն եւ կը փառաբանեն զԱրարիչն բնութեան ամենաստեղծ։

Ընթերցողն ոտանաւոր բանիցս հետ խառն պիտի գտնէ արձակ նիւթերու շարք մ'ալ, զորս դասաւորած եմ ըստ վայելչութեան կարգի, ցորչափ կը ներէր գրոյկիս անձուկ շրջանակն եւ հրատարակման բազմա-

դիմի դժուարութիւնքն, որ ծանօթ են արդէն ամեն հեղինակաց։

Ներկայս իբր մի հրահանգիչ գրօսանք կամ գրական մի չնչին երկ, կը յուսամ թէ փոքր ի շատէ պիտի նը-պաստէ Հայ երկսեռ ուսանողութեան մտաւորական զարգացման եւ, հոգւոյ ազնուացման։ Կրթել ըստ կարի մանկանց ճաշակն, գեղեցիկ հաստուածոց վերծանութեամբ ծանօթացնելով զնոսա գեղեցկին ու ճշմարտին հետ։

Ցոյս մեծ է իմ, որ թէեւ սոյն գործ խնամեալ աշխատութիւն մը չ'է, եւ չ'կրնար կատարելութեան կնիք, այլ սակայն ընդունելութիւն պիտի գտնէ Ազգ։ վարժարանաց Պատժ. Տնօրինաց եւ Ուսուցչաց կողմանէ ի պէտս մանկտւոյն, եւ նամայն գրասէր ազգայնոցմէ, որ կը փափաքին ամեն նոր գործ ընթեռնուլ։ յայնժամ իղձս վարձատրուած պիտի համարիմ եւայդ՝ քաջալեր պիտի լինի ինձ ապագային աւելի օգտակար եւ հրահանգիչ երկեր ի լոյս ածելու։

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

4 Օգոստ. 1892
ի Դատը-գիւղ



ԳՐԱԿԱՆ ՇԻՐԹԵՐ

ԳՈՂԳՈՏԱ

Ի օր Գոհարիկ
Հագուած զարդարուն
Իջաւ կանուխկէկ,
Պարտէզ իւր սիրուն։
Այգուն արեւակ
Դեռ նոր էր ծագած,
Եւ ծառերուն տակ
Նա չոգ չէր տրուած։
Մի քիչ ժամանակ
Ասդին ու անդին,
Դիտեց նա անյագ
Ծաղիկներն անգին։
Եւ ապա եկաւ

Ուժասպառ, յոգնած,
Ծառին քով նստաւ,
Հիացած ապշած։
«Էհ որչափ սիրուն,
«Ծաղիկներ կան սատ»
Ըսաւ նա ժպտուն,
«Անթիւ և առատ։
«Պէտք է որ շուտով,
«Փունջ մի կապեմ ես.
«Ընծայեմ փութով,
«Իմ մօր սիրակէզ»։
Այսպէս խօսելով՝
Դէպ յառաջ գնաց,
Արագ քայլերով,
Փրցնել փութաց։
Իւր փափկիկ մատամբք
Շինեց մի փնջիկ,
Ոյր փայլն էր միակ,
Վարդ նորաթուրիկ։
Յասմիկ և մեխակ,
Շուշան ճիւնաթոյր.
Համեստ մանիշակ,
Կազմէին զարդն իւր։
Ապա քայլերով,
Զուարթ թրթռուն,
Վազեց իւր մօր քով,
Ժպտով մը սիրուն.
«Ահա քեզ բերի,
«Մայր իմ սիրասուն.
«Այս փունջ ծաղկալի,
«Աղուոր գոյնզգոյն։»

Մայրն կաթոգին
Գրկեց զայն սիրով.
Սեղմեց գգուագին,
Մ'անկեղծ գորովով։
Յետոյ դառնալով
Առ դուստրն սիրուն,
Գողտրիկ մի ձայնով,
Կոչեց մեղմասուն. —
«Պէտք է որ այսպէս,
«Զարդարես քո միտք,
«Գիտութեամբ պէս պէս,
«Որպէս սոյն փնջիկ։
«Զանա՛ որ լինիս,
«Յար արթուն և հեզ,
«Եւ ուսմամբ փայլիս,
«Դու զուարթերես»։

1886 Ապրիլ



ԵՐԳ ՄԱՆԿԱՆՑ

—

Եկաւ գարունն ու գով զեփիւռ,
Անցաւ ձմեռն խիստ բքաբեր.
Մեխակ, շուշան, վարդ խնկաստիւռ,
Ծաղկեր են շատ մը գայն դաշտեր:
Ուրեմն երթանք եւ զբօսնունք,
Դաշտերուն մէջ վազվըզել.
Ժողովենք շուտ պէս պէս ծաղկունք,
Մեր ուսուցչին զայնս ընծայել:

1886 Ապրիլ

ԱՌԱՒՕՏ

—

Վարդանոյշ ամպերուն մէջէն ծայրակարմիր եւ բրբ-մազգեցիկ կամբառնայ առաւօտն օրաբեր՝ ալիքներն Ովկիանու վրայ նոր փայլ մը տալով՝ կը ցոլան տերեւ ծաղիկ նոր բոյրերով ու գոյներով եւ բնութիւնը կը խնկեն. ամենուրեք կենդանութեան ձայներ կը լսուին. խաւարն անջրպետին մէջէն հալածուած է. թռչունները թփերուն մէջ կը նուագեն. Աստուծոյ տանարը դպրին մեղեդիներով եւ քահանայից շարականներով կը բնդայ՝ այրն կերթայ ի վաստակ իւր. եւ հովիւն իւր ոչխարներ առաջ ձգած կելնէ մարգագարդ բլուրն՝ ի նարակ:

1885 Յունիս

ԱՌ

ԳԵՐ. ԱՌԱՔՆՈՐԴՆ ԶՄԻՒՌՆԻՈՅ

Տ. ՆԵՐՍԷՍ Փ. Վ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

—

Մանկունք Հայոց ահա փութան,
Քեզ ողջունել ցնծաձայն.
Որ դիմած են հոյլի հոյլ:
Սփռել ծաղկունս բոյր ի բոյր:
Գալուստ քոյին շնորհաբեր
Մեզ կեանք տուաւ յոյս եւ սէր.
Կեցցէ Տէր մեր պատուական
Հայր մեր Ներսէս Արսլանեան:

Ո՛վ դու հովիւ բարեջան
Հայր անձնուէր պատուական,
Որ վիճակիս կելնէք յայց.
Ցոյց տալ ուղին մեր կենաց:
Որ գաս սփռել հաճոյութիւն
Ազգիս մերոյ սէր, աւիւն.
Կեցցէ Տէր մեր պատուական
Հայր մեր սիրուն Արսլանեան:

1891 Սեպտ.

ԿՈ ԿՈՅՍՆ ԿԱՔԵԼԻՔ

—

Առ'օտ մի փայլուն արեգով
Դացի շրջել բուռը տենչով,
Ի մէջ դաշտին գեղադալար,
Ուր փթթէին ծաղկունք հազար
Տեսքով սիրուն եւ թոյր ի թոյր,
Քրքում, նարդոս, վարդ խնկաբոյր.
Ծառերն էին տերեւ հագած,
Բընութեան հետ ամեն զարթած.
Թռչունք սիրուն եւ անխռով
Կոստոստէին ճռուողելով.
Ցիշատակ մի կարծես սրտէս
Ի վեր թռաւ եւ անձկակէզ,
Ցիշեցուց ինձ աւուրքն այն
Յորում ծիծաղն փայլէր միայն
Վերայ շրթանցդ կարմրագեղ,
Կը ժպտէիր ինձ սիրազեղ.
Քեզ հետ նստած մօտ առուակին
Կ'երազէինք մեք սրտագին.
Մերթ ժպտէիր հեզահամբոյր,
Ձերդ մի ծաղիկ դեռ նորաբոյր.
Որ կը ծաղկի ի պարտիզին
Ցանուշահոտ բուրաստանին,
Քեզ հետ զուարթ էինք հոգւով,
Եւ խօսէինք մեք անվրդով.
Ձեռքդ առած ձեռացս մէջ՝
Կ'այրէի ես սիրովդ անշէջ.

Այլ վա՜ն, գնացիր դու յինէն,
Եւ տխրեցայ ո՜ւ... ես անդրէն.
Թողուցիր ինձ յուշքդ անհուն,
Խօսքերդ վսեմ եւ զուարթուն.
Երբ կը շրջիմ մերթ յայս դաշտեր,
Ցիշեմ ըզքեզ եւ այն ծառեր՝
Որոց ճիւղքն ստուերամած
Հովանի էին մեր գլխաց.
Եւ առուակն այն հեշտալուր
Որ զովցընէր մեր սիրտ տխուր,
Եւ սոխակին վսեմ գեղգեղ,
Երկնից կամարն կապուտագեղ.
Ո՜ւ, այս ամենն էին անցած,
Եւ բնութիւնն ինձ մթնցած.
Երբ դու չ'կաս իմ մօտ քաղցրիկ
Սէրըդ անուշ եւ թափանցիկ.

1887 Mars

ՅԻՇԱՏԱԿ ՄԸ

—

Երբ մտախոհ առանձնակի կամ նստած,
Սենեկիս մէջ.
Տխուր խոհեր զիս կը պատեն վրդոված,
Մտացըս յէջ.
Երբ կը յիշեմ անցեալին քաղցր յիշատակ,
Զուարթ երազք.

Որովք հոգիս կը մորմոքի տխրունակ,
Բիւր հառաչք.
Կարձակեմ ես այրած որպէս վշտասուն,
Երբ կը յիշեմ.
Թ'այլ եւս անցան դարնան օրերն այն սիրուն,
Ծիծաղագէմ.
Ցորում կեանքն այնչափ հաճոյք ինձ առթէր,
Անմեղունակ.
Զուարթ էի, դեռ ես չունէի խոհեր,
Տխուր համակ.
Նման մանկանց՝ որք չեն գիտեր թախիծ վիշտ,
Անմեղ մանկունք.
Սիրտ մ'ունիմ ջերմ թրթռուն կերգեն միշտ,
Զուարթ անհոգ.
Կայտուեն հրճուին եթերին տակ թեւ ի թեւ,
Ազատ արձակ.
Ձերդ թիթռունք՝ ոստոստելով քայլիւ թեթև.
Ծառոց ի տակ.
Կը վայելեն շքեղ գարուն, ծաղկունք սիրուն
Թոյր ի թոյր.
Եւ սոխակին դայլայլն, մեղուաց՝ բզզիւն
Թեթեւասոյր.
Արդ՝ երբ յիշեմ այդ մանկութեան սիրական
Քաղցր օրեր,
Եւ յիշատակն այդ աւուրց նուիրական,
Զիս խռովեր.
Ցայնժամ սիրտս վշտամորմոք կրկին յուզի,
Երբ մտածեմ.
Թ'որքան շուտ անցան գացի՜ն անդառնալի,
Ստուերք նըսեմ.
Նման ամպոց այն մթագին որ յածին
Երկնից վերեւ.

Եւ սակայն չո՛ւտ ցրուին նոքա , անհետին,
Փայլի արեւ ։

Այլ իմ ճակատ ամպերով է ծածկուած ,
Թուխ մթագոյն ։
Եւ հորիզոնն իմ կենաց սեւ ներկուած ,
Ժպտի տժգոյն ։
Ա՛հ , այլ եւս կզգամ թէ զիմ ջահ կենաց
Պլպլացող ։
Պիտի մարի սեւ փոսին մօտ գերեզմանաց
Մթասքող ։
Ա՛հ , լցէ՛ թէ այլ մի ոք յետ իմ մահուն՝
Զիս յիշէ՛ր ։
Եւ իւր մտաց մէջ անմոռաց իմ անուն ,
Ցաւէ՛տ պահէր ։

1887 Յուլիս

ԴՊՐՈՅ

Դպրոցն իմաստութեան և առաքինութեան տունն է ։ որոյ յարկին ներքեւ ի խնամս բարեջան Ուսուցչաց մեղուական վաստակօք կը մարզին ի հրահանգս մըտային մրցմանց և կրթութեան աղածրի մանկտիք , պատանիք և պարմանիք։ Հոն կուսնի ճարտասանն իւր խօսից որոտընդոստ ձեւերը ։ հոն բանաստեղծն իւր դեռավարժ մատունքն կը կրթէ մուսայից քնարը թրթռացնելով եւ հոմերական սխրալի նուագներ

դաշնակելով ։ վերջապէս զաշխարհ իւր մտածումներով քաղաքակրթող և իւր հանճարին շահումն զմարդկութիւն խաւարին անթոյլ նախապաշարմանց յոգնատխուր գիշերոյն մէջէն ի լոյս անդր ի գիտութիւն առաջնորդող միանուն եւ գերահռչակ անձինք սոյն իմաստութեան յարկին ներքեւ կամին ու կը բարգաւաճին ։

1886 Հոկտ.

585
40

ՇԻԹ ՄԱՐՏԱՍՈՒՔ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՀՕՐՍ ՇԻՐՄԻՆ ՎՐԱՅ

—

Աւա՛ղ , հայր իմ , եւ դո՛ւ ալ շուտ հիւծեցար ,
Անհուն ցաւոց բեռանց ներքեւ դառնացար ։
Անգութ մահն զքեզ յինէն շուտ բաժնեց ,
Անվերջ վշտոք մատաղ սիրտս խոցոտեց ։
Առ ի՛նչ արդեօք , հա՛յր , բողեր ինձ յիշատակ ։

Ցաւէս ողբալ եւ հառաչե՞լ միայնակ.
Առ ի՛նչ արդեօք, հա՛յր սիրական բազմագութ,
Հէգ որդեկիդ պատճառեցիր վիշտ եւ սուգ.
Հասակդ առոյգ, մարմինդ ուժեղ հաստատուն,
Բարձր նակատդ՝ խորհում, նկուն, այլ խոհուն.
Հանգստացաւ ցուրտ հողին տակ առ յաւէս.
Ամոքելով ցաւերդ ամեն դառնաղէտ։

* * *

Աշխարհն էր քեզ համար արդէն մրքնցած,
Կեանքն շղթայ եւ ապրիլն փուշ մ'եղած.
Քեզ համար չէր կենաց վայելք սիրակաք.
Գարուն, գորով, մտերմութիւն, ժպիտ, վարդ
Սոխակին երգն տխուր նիշ մ'էր քեզ համար,
Զի հոգիդ չէր զուարթ, այլ միշտ վշտահար.
Հեզիկ փրփուրն առուակին չէր զովցրնէր.
Եւ ամոքէր ցաւերդ բոլոր արտաւեր.
Եւ ձայնք, ժխոր եւ աղմուկք բնութեան,
Քա՛ բիւր վշտաց չէին տար, ո՞ն մի դարման.
Սակայն աւա՜ղ, այս ամենքն ցնդեցան
Ցուրտ շիրմին տակ ննջեցիր դու անկենդան։

* * *

Ցիշե՞ս արդեօք, հա՛յր դու դժբաղդ եղկելի,
Մ'իակ որդիդ, զոր որբ թողեր յաշխարհի.
Լսե՞ս արդեօք քայլիս տկար ձայներն, դողդոջ
Որք կը դիմեն քեզ յամրաբար, այլ անխոնջ.
Գերեզմանիդ գլուխն կանգնած վշտագին,
Պիտի ողբամ հայր իմ, ընդ միշտ դառնագին.
Էր արդեօք դու վաղ խոյս տուիր յայս կենաց,
Դեռ ես կ'ապրիմ սիրտս ու հոգիս ճնշուած.

Ամեն առտու հեռ արեգին ճառագիչին,
Եւ գիշերներն հեռ պայծառ լուսնեկին,
Պիտի փութամ ես գալ շիրմիդ այցելել.
Փունջ մի ծաղիկ, շիր մ'արտասուք անդ թափել.

Հանգեաւ յամի Տեառն 1882 Մարտ 16.

1887 Մարտ.



ԳԱՐՈՒՆ

—

Ողջո՛յն Գարուն, համայն բնութիւն նորազարթ,
Դաշտք և հովիտք և բլուրներ մարգազարդ.
Գոյն գոյն ծաղկամիք և դալարեօք պճնուած,
Գեղեցկապէս պարզին առաջ մեր աչաց.

Առուին խոխոջն, հեզձայն մրմունջ վտակին.
Թռչնոյն երգն և սիրուն դայլայլն սոխակին.
Հրճուեցնեն տխուր սրտերն անմեկին,
Որք կը հեծեն զոր հանապազ վշտագին.
Զունին նոքա մի բարեկամ յաշխարհի,
Կամ մի ձեռքն կարկառող գրթալի.
Թշուառութիւնն զիրենք պատե՞ր մահաստուեր,
Եւ հորիզոնն իրենց կենաց՝ մըթագներ.
Զունին նոքա մի բեկոր հաց. և նուաղ,
Կը թափառին փողոցաց մէջ անսուաղ.
Ցնցոտիներ պատած իրենց մերկութիւն,
Զը գիտեն ո՞ւմ դիմեն հայցել օգնութիւն։
Գարունն սակայն ահա բանայ իւր դրներ,
Եւ կը սրբէ հիգին աչաց արցունքներ.
Կը փարատին մէգ և մութ թանձրապատ.
Եւ կը հալին դաշտաց ձիւներըն առատ.
Քամին սաստիկ ալ կը դադրի փչելէ,
Գարնանային մեղմ զեփիւռը կը շնչէ.
Ծաղկին ծառեր և տերեւներ կզգենուն,
Արագիլն ալ շուտով դառնայ իրեն բոյն.
Եւ առուակներ խոխոջելով կը սահին,
Մարդաց մէջէն և դաշտերուն ահագին.
Սոխակն ալ կերգէ անտառաց խորերէն.
Եւ կըզմայլինք մենք իւր անուշ գեղգեղէն։

* * *

Ո՛վ Գարուն յոյս իմ կենաց ցօղ զովարար,
Աղէխորով հրոյս անշէջ կենդանարար.
Քեզմով ևեթ պիտ՝ փարատի վիշտս համայն
Վիշտք աղէխոց, հոգեմաշիկ որ միայն,
Պիտ՝ ամոքի, երբ յայց գամ քո դաշտերուն,

Կամ երբ շրջիմ մարգաց վրայ ծիծաղուն.
Որչա՞փ սիրեմ թիթեռնկաց հետ ոստոստել.
Կամ թէ անմեղ գառանց մայիւնըն լսել.
Որք ճարակեն վերայ խոտոց հոյլ ի հոյլ.
Բայց խմբուին երբ կը լսեն հովուին սոյլ.
Որչա՞փ սիրեմ մի պաղպաջիւն առուի քով.
Նստիլ խոկալ և երազել հոգեխռով.
Կամ անտառի մը շուքին տակ մենացած,
Լռիկ ճնջիկ անդ՝ մոռացեմ վշտազգած...։

1888 Մայիս

ՇՐԴԵՂՈՒՄՆ ՏՐՈՎԱԴԱՅԻ

—

Կէս օր էր.

Դանայեանց Նենգամիտ Նուէրը, Հայտեաց անարդիլ ու անհեթեթ երիվարը եկած կանգ առած էր Տրովադայի պղնձեայ դրանց առջեւ. փրփրածին և լուսածդինն Աստղիկ չքնաղեղ մէտէորի մը նման տխուր և դալկադէմ՝ Արամազդայ օդակառոյց և ամպեղէն կամարին վրայ հոլաթեւ սաւառնած՝ դժբեմ դէպ ու վէպ մը կանխասելու պաշտօնն ունեցող գուժկանի մը կերպն ու ձեւն առած էր։ Ցանկարծ Տրովադացիք չգիտեմ ի՛նչ դիւրախաբ և դիւրահաւան համոզմամբ իրենց անառիկ ու տասնամեայ պաշարմամբ աննկուն ու կանգուն կեցող ամրոցին ու մարտկոցին ահեղաշէն դրները բացին, ներս

ընդունելու համար, ընծային տակ ծպտեալ պատիրը։

Ապողանի լուսաճաճանչ կառքը տարաժամեալ տուընջեան, Սիդոնեան առագաստին տակ թաղուելով Մորիէի խաւարամած վարագուրին տակ լռենագիլ սահեցաւ մնաց։

Եւ մինչդեռ Տրովադացիք ի խինդ և ի խնծիլ բերկրանաց արբեալ չուարեալ էին Դանայեանց նորանչան նուէրէն, խոր ի քուն, ի քաղցրանինջ խաղաղած մրափած էին. յանկարծ բոցերու ահեղ ճարճատիւն մը զՏրովադան հրեղէն Ովկէանի մը փոխարկեց։ Փայտեղէն իրիվարին ծոցէն գունդագունդ և սպառազէն մարդիկ՝ ջահ ի ձեռին դուրս խուժած էին, յայտնի քաջութեամբ առնուիլ անհնարին եղող Տրովադան գաղտնի խաբէութեամբ ի բոց և յահիւն մըղելու անարի վատութիւնն ունեցան նենգժոտ Յոյներ։

Նորատի և գեղանի հարսունք և աղջկունք լալահառաչ և հերարձակ ի զուր բոցերու լափիչ ճիրաններէն զերծանիլ և խուսափիլ կը նկրտին. թողլով իրենց առագաստն ու զարդասենեակ. այրող, աւերող բոցերուն ու խարոյկներուն տակ իրենք ալ կկոնան, կաճիւնանան. ընդ վայր հայրն իւր որդին, որդին իւր հայր կորոնէ կարօտագին, վերջին ողջոյնը, վերջին սիրալիր խօսակցութիւնը փոխանակելու համար...։

ԱՌ ՄՏԵՐԻՄՆ ԻՄ ՍԻՐԵԼԻ

Պ. ՏԻԳՐԱՆ ՉԱԼԱԾԵԱՆ

—

Մտածէ՛ զիս, յորժամ նստած դու մենիկ,
Եւ հոյիններդ ֆեզ մոս չ'կան ու հաղցրիկ.
Խորհրդոց մէջ ընկղմեալ կաս դու համակ,
Խորհուրդք անվերջ, անծայրածիր անյատակ.
Ոյց խորութիւն ֆեզ վիշտ կառքէ եւ ոչ ժպիտ.
Չի ես գիտեմ թէ վշտահար է հոգիդ.
Այլ մի տրտմիր, զի այս աշխարհ է անցաւոր
Սակաւ ժպտին, իսկ մեզ համար սգաւոր.

Մտածէ՛ զիս, թէ առանձին դու շրջիս,
Անհոգ, անվիշտ մանկան մը պէս դեգերիս,
Երգել կամիս կամ թիթեռանց հետ թռչել,
Կամ թէ երթաս անտառաց խորն ստուեր.
Նոճիներու շուքին ներքեւ տրտմակոծ,
Ուր վիշտ եւ հոգք ֆեզ կը պատեն ի խորոց.
Կամ առուակի մ'եզր նստած պաղպաջուն
Անդ կերազես կամ մտածես դու անքուն։

Մտածէ՛ զիս, երբ գիշերը մթամիւռ.
Կը քողարկէ բնութիւն եւ զով զեփիւռ,
Կը շնչես դու նստած առաջ պատուհանիդ,
Կամ ձեռն ի ծնոտ յեցած գլուխդ սեղանիդ.

Մերթ կը գրես, մերթ կը յուզիս վշտազգաց,
Միշտ յիշելով անցեալ իրերն անմոռաց.
Իրք անհամբոյրք, չարագուշակ, բօթաբեր
Որք կը խոցեն մեր սրտերը կարեվէր։

Մտածէ՛ զիս, երբ քո մանկուցք զոյգ ի զոյգ,
Կը վազվզեն ի մէջ դաշտին՝ եւ առոյգ.
Են հասակաւ եւ դէմքով գեղաժպիտ,
Եւ դու նստած ի մէջ նոցա անքրթիթ.
Դիտես նոցա անմեղ խաղրն մանկային,
Յայնժամ հրճուի եւ քո հոգին տրտմագին.
Յիշէ՛ եւ հէգս, քերթողդ հեզ, այլ արի
Որ այլ եւս չկամ եւ ես յաշխարհի։

1886 Յունիս

ԸՆ Գ. ՍՏԵՓԱՆ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

—

Մտածե՛մ զքեզ, այո՛, աւա՛ղ, եւ յայս վայր,
Ուր բազմիցըս գէթ ժուռ գայինք վշտահար,
Մերթ ձեռն ի ծնօտ, հառաչն ի սիրտ աստ՝ նստած,
Ո՞հ յիշէինք անցեալն, անցեա՛լն այն մթած.
Սեաւ սեաւ խորհուրդք կը զեղուին մեր մտքէն,
Եւ սակայն շո՛ւտ կ՚անցնին ստուերք արեգէն...
Իսկ դու անդրէն բաժնուեցար չուեցիր,
Եւ զիս վշտաց մէջ միայնա՛կ թողուցիր։

Մտածե՛մ զքեզ, այգուն մինչ վաղ կը զարթնում,
Յորժամ չ՚եւ եւս զիս հոգք պատեն անհատնում,
Մինչ սոխակին գեղգեղ լսեմ գերբնական,
Եւ բնութեան ժխորք տակաւ սաստկանան.
Յիշե՛մ զքեզ, եւ սոխակին երգ տխուր,
Կա՛մ առուակին դդչիւնն հեզիկ ի փրփուր.
Զեփիւռին սոյլն եւ արեգին շողք նախկին
Գոգցես յուշքդ են եւ յիշատակք անմեկին։

Մտածե՛մ զքեզ, մինչ գիշերոյն մէջ խաղաղ,
Մէն միայնակ կամ աստ նստած մտազբաղ,
Եւ լուութիւնն այն մահադէմ գիշերին՝
Որ խորութեան մէջ մարդկան միտք գլորին,

Կ'գայ պատել զերդ Ովկէան մ'անսահման
Կամ դաշտ մ'անհուն, ուր խոհքս ոգւոյն այն նման՝
Կը թափառին, թռչին, սուրան եւ անդրէն
Դառնան առիս եւս սեւագոյն համօրէն։

Մտածե՛մ զքեզ, եւ կը յիշեմ այն օրեր,
Ցորս բաղդն նուազ զմեզ աստ անդ կ'որորէր,
Ա՜հ, եւ նոքա անցան զուգիլ անցելոյն
Մեզ արդ եւեթ մընան ստուերք գովելւոյն։
Եւ սիրտս յայնժամ վշտամորմոք կը սեղմի,
Եւ հառաչներ — մռո՛ւնչք հոգւոյն՝ որ թոռմի —
Խոյս տան կրծքէս, եւ նուաղ ծայնիւ հոգեկան,
Ա՜հ, աշխարհի, հծծեմ, ո՞րքան թշուառք կան։

ՏԻԳՐԱՆ Ս. ՇԱԼՃԵԱՆ

1886 Յունիս
Վոսփոր

ԿՈՅՍՆ ԶՈՒԱՐԹ

Տե՛ս սա ծաղկոս բուրաստանին,
Կնդրկաբոյր խնկենւոյն տակ։
Անմեղանակ զուարթ կուսին,
Մատանց ներքեւ գեղաշիտակ։
Կը թրթռայ մեղմ եւ յուշիկ,
Իւր փափկահինչ ոսկի քընար,
Գոգցես հոգի մի ոսկեղնիկ։
Դէմքն էր պայծառ լուսազարդար,
Ցերկնից յերկիր տարագրուած,
Մի երկնային էր Զուարթուն,

Հոգւոյն ի խանդ ոգեւորուած,
Աչերն էին կապոյտ փայլուն։
Խոպոպք վարսից գեղագանգուր,
Ուսոց վրայ մերկ եւ ներմակ,
Կը շարժէին թեթեւասոյր,
Հողմոց ի շունչ մեղմ անուշակ։
Իւր գեղորակ ամբիծ այտեր։
Վարդ եւ շուշան կաթկըթէին,
Իւր կարմրալար երկթերթ շրթներ,
Սէր եւ կնդրուկ կը բուրէին։
Ի փունջ վարդից գեղապսակ,
Պճնազարդած էր իւր ճակատ։
Ծաղկունքք անթիւ եւ երփներանգ։
Կը փայլէին զերդ լոյս հրատ։
Զգեստք նորին ո՜հ նրբահիւս,
Շղարշ էին յոյժ ըսպիտակ։
Ոսկիապատ մեծախահիւս,
Ժապաւինքք բազմագունակ։
Մատն ի քնար, շուրթն ի նուագ,
Աչերն յերկինս զմայլագին։
Դիտէր կամարն այն կապուտակ,
Փայլուն շողերն վառ արեգին։
Եւ սոյն պահուն հոգեզգած,
Ցոյժ քաղցրացայ որպէս այս կոյս։
Նոր աւիւնով խանդավառուած,
Զէի տխուր եւ ոչ անյոյս։
Զար են անոնք, որ երգ չունին,
Իարի սիրտ, մ'ազնիւ հոգի։
Ոչ այլ ինչ է, բայց երգ մ'անգին,
Երգ մը սիրուն, թրթռալի։

1887 Մարտ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԹՌՉՈՒՆ

Ո՛վ սիրախօս դու թռչուն,
Երգես ի մէջ անտառին.
Եւ ձայնիկովդ քո սիրուն,
Հրճուանք առթես իմ սրտին։
Ո՛վ բնութեան երաժիշտ,
Քաղցր երգիդ կամ ի լուր.
Եւ ցաւոցս տամ հրաժեշտ,

Թոթուեմ հոգւոյս իմ անուր։
Ի՞նչու՞... ըսէ՛, ինձ, թռչուն,
Թէ այդչափ շուտ կը ճախրես.
Կը սլանաս դէպ յանհուն,
Երկնքէն լո՞ւր կը բերես։
Եթէ երթաս դէպ յայն կոյս,
Դէպ ի սիրուն հայրենիք,
Հոն պիտ՝ գտնես յարտասուս,
Իմ հայրս և հէգ մայրիկ։
Ըսէ՛ անոնց թէ ի՛նչպէս,
Կանցնեմ օրերս ես վշտով,
Եւ դառն հառաչք ի սրտէս
Կը բաժնուին հուր անձկով։
Պատմէ՛ նոցա թէ այս կեանք,
Որչա՛փ դառն է վշտալի.
Թէ յետ կենաց պիտի գտնա՞նք,
Այլ աշխարհ մը ցանկալի։
Չի այս աշխարհ է ինձ համար,
Խորունկ մի ծով դառնահամ.
Ցոր տատանիմ անդադար,
Մահս խնդրեմ տարաժամ։
Սիրտս է խոցոտ վիրաւոր,
Ցոյսերս մարած են ամեն.
Հոգիս տրտում սգաւոր,
Կուզեմ մեկնիլ աշխարհէն։
Ո՛վ դու թռչուն քաղցրախօս,
Վերադարձիդ քո գարնան.
Երբ չգտնես զիս ա՛լ հոս,
Հոն թառէ չիրմիս վրան.
Վշտաձայն ողբեր կարդա՛։

1886 Յուլիս

ԼՈՒՍԻՆ

—

Դշխո՛յդ գիշերալոյս
Զերդ մի փարոս մշտալոյս.
Որ փայլիս երկնից վերեւ անստուեր
Եւ արձակես բիւր ճաճանչք լուսաւեր.
Տխուր ոգեաց, այրած սրտից ըսփոփիչ,
Ո՛վ լուսին, Աստուածավառ յանկուցիչ.
Երբ կը շրջիմ ի խոր լռութեան՝ գիշերայն
Քեզ կը դիտեմ, քեւ կամոքին վշտերս համայն.
Լուսի՛ն, լոյս մտացս, հոգւոյս լապտերը փայլուն
Որ մանգաս երկնից ոլորտն անհուն.
Դէմքդ սիրուն պայծառագեղ զերդ կուսիկ
Որ ժպտիս ամպոց մէջէն միշտ հեզիկ.
Մերթ շիկնելով ամօթագեղ՝
Շողաս դու ամեն տեղ։

1887 Յուլիս

ԵՐԿՈՒ ՎԱՂԱՁՐԱՒ ՀԱՆՃԱՐՆԵՐ

ՊԱՐՈՆԵԱՆ ԵՒ ԱԴԱՄԵԱՆ

—

Գրական հորիզոնին վրայէն երկու աստղեր ալ մարեցան. աստղեր՝ լուսատու և շողշողուն։ Մեռա՛ւ Պարոնեան, բայց չմեռան իւր գործեր, որք կարեւոր տեղ մը գրաւեցին հայ գրականութեան ոսկեղնիկ էջերուն մէջ։ Իւր երգիծաբան շատ սուր գրչաւ մը հարուածեց Ազգային, ընտանեկան, ընկերական, անհատական մոլութիւններն ու մոլորութիւններ, ղեղծումներն ու թերութիւններ. և հարթեց ուղին ճշմարտութեան և առաքինութեան։ Թէև իւր կծու քննադատութիւններն մի քիչ չափազանցեալ կ՚երեւին Ազգային Ջոջերու մէջ. այլ սակայն իւր քաջամարտիկ ախոյեան կը մաքառէր շարունակ ընտանեկան նախապաշարմանց, վատ սովորոյթներու դէմ, գրական անձնաւորութեանց ունեցած սորուկ վիճակն ի հանդէս ածելով՝ անտարբեր և սառնասիրտ մեծատանց գութն ու գորով կը շարժէր. այն ցո՛ւրտ արհամարհանքն և ատելութիւն, որ կը տածեն ճոխապանծ ազգայինք ոմանք. զուարճական ոճերով նոցա ծաղրանկարն երեւան կը հանէր, կը պատկերացնէր Հայուն։

Ադամեան Հայոց հռչակաւոր ողբերգուն՝ հուսկ ուրեմն փակեց իւր աչերն յաւիտենապէս, յետ երկար և տառապեցուցիչ մի հիւանդութեան. հազիւ 43 գարուններ բոլորած կեանայ կը մնայ խորշակահար, իւր ծաղիկ վաղաթարշամ ի գիրկ մահուան. թողլով սուգ անմխիթար և արտասուք անցամաքելի։

Հայ թատրոնն այրիացեալ կողբայ այսօր զիւր անդարմանելի կորուստ յանձին Ադամեանի՝ մեծ ողբերգուին, որ կը փայլեցնէր թատերաբեմն իւր բնական տաղանդովն, յուզիչ և սրտառուչ խօսքերովն ու ձեւերով։ Ադամեան թէ ի Թուրքիա, և թէ ի Ռուսիա մեծ համարում կը վայելէր, մանաւանդ ի Թիֆլիզ, ուր համակրողաց բազմութիւն մը հիացող Ադամեանի հանճարին զինք իւր ուսոց վրայ բարձած կը տանէր. ո՛չ թէ ծափերով ու փունջերով կը վարձատրէին, ինչպէս մենք, այլ լիաճոխ սեղաններ, ոսկեայ ժամացոյցներ ու շղթաներ կընծայէին նմա...։

Աքանչելի էր տեսնել Ադամեանն Համլէթի դերին մէջ. համակ խանդ և աւիւն զգեցած... ոչ թէ միայն ողբերգու այլ նկարիչ և բանաստեղծ էր միանգամայն. իւր գրած բազմադիմի և բազմագոյն քերթուածներն, որք այլ և այլ պարագայներ ներշնչած են նմա. անմահութեան պսակներ կը հիւսեն իւր դամբանին։

Պարոնեան կը գրէր հրապարակի վրայ, Ադամեան կը փայլէր թատերաբեմին մէջ. մին զուարթախոհ երգիծարան մը՝ միւսը ճարտար դերասաց կամ մելամաղձ ողբերգակ մը մին կը ծիծաղեցնէր. միւսն կը յուզէր խորապէս. երկոքին անխոնջ մշակներ հայ դպրութեան, մանաւանդ զոհն հայ ազգին։ Ադամեան թատրոնը ծաղկեցուց. Պարոնեան երգիծական դպրոցը հիմնեց. մին կենդանութիւն տուաւ հայ թատերական խմբին, միւսն իւր եզական հանճարով մեծ տեղ մը գրաւեց պատմութեան մէջ, պատառելով նախապաշարմանց վարագոյրն յաւէտ։ Ազգ. Ջոջերը և Մեծապատիւ Մուրացկանները ինչպէս կ'ըսէր Գուրգէն, անմահ գործեր են ամեն ժամանակի համար և երգիծական հանճարոյ հոյակապ ծնունդք, որք պատիւ կը բերեն Ազգ. գրականութեան։

Մաղթենք ուրեմն, Երկին՝ որ օժտած էր զիրենք անզուգական ձիրքերով և ընտիր ընտիր յատկութեամբք, յաւէրժացնէ իրենց յիշատակն յետ մահու, և անջինջ դրոշմէ Հայ սրտերու մէջ. եթէ անգութ Պարկայք շուտ խլեցին նոցա կենաց թելն և չիջուցին զպայծառ արեւ, գէթ չնորհէ՛ մեզ նոցա հետեւողներ և արժանաւոր մշակներ Հայ դպրութեան, ի պարծանս Ազգիս։

1891 Յունիս



ՇՈՒՇԱՆ

—

Ո՞որ ափլթիթ՝ սիրուն շուշան,
Է՞ր դու այդպէս կաս ծիւնաթոյր
Թերթերդ ամեն հողմաճաճան,
Սպիտակ եւ անուշաբոյր
Սգալուիկ ի վայր կըքիս,
Ո՞վ դու՝ ծաղկանց դշխոյն ջըք-
նաղ,
Է՞ր այդպէս վաղ կը թարշամիս.
Եւ զիս թողուս մենիկ, աւա՜ղ.
Միթէ արեգն՝ զիւր ջերմ ճաճանչ
Հողմիկն իւր շունչ՝ զլացա՞ն քեզ,
Որ թառամիս դու անճանաչ,
Քո պերճ տեսքէն զիս կը զրկես.
Դու հարսնացու անմեղ կուսին,
Մէջ դրախտին երջանկութեան
Գեղաճիճաղ բացուող ծաղկին
Կոկոնիկնես ամբծութեան.
Ցողիկ, շաղիկն ըզքեզ սիրեն
Բացուէ՛ շուշան, շիկնոտ շուշան
Հողմիկ, թռչնիկն ըզքեզ գգուեն,
Սրտեր ամեն քեւ զովանան.
Բացուէ՛ շուշան, երբ դու բացուիս
Կուրախանամ ես քեզմով միշտ.
Բացուի նաեւ իմ տխուր սիրտս,
Զերդ մի մանուկ կըլլամ անվիշտ.

1887 Mars

ԵՍ ԶՔԵԶ ՅԻՇԵՄ

Երբ գարնան դռներ բացուին ոսկեղէն,
Եւ զուարթանայ բնութեան հետ ամեն.
Սոխակն ի պուրակ, ծաղիկն ի ծղօտ։
Մին կերգէ, միւսըն բոյր տայ քաղցրահոտ։
Աղջիկ գեղադէմ,
Ես զքեզ յիշեմ։

Թէ ձմեռ լինի բրքաբեր հողմեր,
Հալածեն զանցորդս դէպ իւրեանց տներ.
Թէ սառ եւ թէ ձիւն ամեն կողմ պատեն,
Եւ աղմուկ բնութեան դադրի համօրէն.
Կոյս համեստադէմ,
Ես զքեզ յիշեմ։

Թէ երեկոյին խոկմունք սրտաւեր,
Կը պատեն զինեւ իմ հոգւոյս խորեր.
Թէ առաւօտուն երբ վաղ զարթնում ես,
Սիրտ իմ վշտաբեկ խոցուած չէ դեռ ևս.
Ես բարւոք գիտեմ,
Թէ զքեզ յիշեմ։

Թէ երգըք սիրուն լսուին ամեն տեղ,
Կամ մատունք կուսին դաշնակեն գեղգեղ.
Թէ ծաղկեայ պսակ զիմ գլուխ դնեն,
Աղջկունք գեղահեր զիս շրջապատեն,
Ով պատկեր վսեմ,
Ես զքեզ յիշեմ։

Թէ երթամ շրջել անտառին խորեր,
Առ տակաւ մեղմել իմ անհուն ցաւեր.
Կամ մենիկ նստած առ եզերք առուին,
Լսեմ ըզխոխոջ նորա տրտմագին,
Անդ քեզ կերազեմ.
Միշտ զքեզ յիշեմ։

1886 Յուլիս

Ի ՄԵՀ ՍԴԵԼԻ

ՄԵԾ ՄՕՐՆ ԿՍՈՅ ՍԲՐԵԼԻՈՅ

—

Ս.

Վա՜ղ, որ դուալ շուտ թօշնեցար,
Ծանրաձանրը ցաւոց ներքեւ.
Մարմինդ եղաւ ո՜ղ... դալկահար,
Եւ մարեցաւ կենացդ արեւ։

Հասակդ ուժեղ եւ աննըկուն.
Դէմքդ ժպտուն եւ յար զուարթ.
Քայլերդ արագ, թեթեւ շարժուն.
Հողին ներքեւ փտտեցան արդ։

Թէպէտեւ ամք քոյին հասակ.
Զարդարած էր ամեն բարեօք,
Դեռ ունէիր սակայն փափաք,
Զրթողուլ հէգ՝ որդիդ անոք։

Շատ սիրէիր վեհ բընութեան,
Տեսարաններն այն ծիծաղկոտ.
Մարգ եւ զեփիւռ, մեխակ շուշան,
Գարուն ժպիտ, վարդ խնկաւոտ։

Շատ սիրէիր ընկերութեանց,
Եւ ակմբոց մէջ դու փայլել.
Սիրոյ, յուզմանց եւ գգուանաց,
Ձայներըն քեզ հեշտ էր լսել։

Բ.

Սակայն աւա՛ղ, մահը ն անգութ,
Քանի՛ սրրտեր խոցեց, գընաց։
Եւ չունեցաւ քեզ համար գութ,
Զրխնայեց մեր արտասուաց։

Զերմ արտասուքն այն ողողուն,
Զոր թափէինք մահճիդ վրայ։
Սրտից խորէն մեր վրդովուն,
Հառաչէինք մեք անխընայ։

Է՞ր դու այդպէս Մեծ մայր սիրուն,
Զմեզ թողեր որբ եւ անտէր,
Եւ կեանքդ տուիր վա՛ռ։ ։ ։ սեւ հողոյն,
Հիւծեալ մարմինդ հանգեաւ ի Տէր։

Մեր բաժինն է այսուհետեւ,
Յաւէտ ողբալ եւ հառաչել։
Կեանքիդ վերայ սակաւատեւ,
Եւ դառն սրտով միշտ արտասուել։

Ամեն գարուն իւր վարդերէն՝
Թէ շնորհէ ինձ մի փնջիկ։
Պիտի փութամ գալ զարդարել,
Քո շիրիմդ սգալուիկ։

Հանգեաւ յամի Տեառն 1878 Յունիս 6

1887 Մարս

ԱՌ Պ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

—

Ա.

Հոգիս յուզեալ, սիրտս է կրկին վշտահար,
Մինչ խորհիմ թէ յինչ հեռի՛ կաս դուք յար։
Եւ կըսես ինձ։ «երգերդ քանի՛ հոգեյոյզ
«Մէն մի խօսքերդ տային ուրիս մի նոր յոյս»։
Աւա՛ղ, ընկե՛ր, տխո՛ւր, տխո՛ւր է իմ սիրտ,
Զուարթ լինել ընդ վա՛յր թափեմ նիգ եւ քիրտ,
Եւ ո՞յր համար երգել այլ եւս յաշխարհի,
Հոգիս՝ միայն իւր բաժանմա՛ն կը խորհի։ ։ ։

«Գերեզմանի, կըսես, կանգնած դրան քով,
«Միոյն յոյս տաս եւ զայրս տխրես քո երգով»։
Ա՛հ ինչ՝ թէ չըզգար հոգիս զայդ աւիւն,
Չի երգերո՛վս է որ լցուի սիրտս արիւն։
Անյուսութիւն փակած կենացս ապարէզ,
Կ'ըղձամ, ընկե՛ր, վա՛ղ իսկ մեկնել յաշխարհէս։
Չի քանի՞ցըս յայս փոս խաւար խնդացի,
Վայրկեանն մ'եւեթ, յորմէ հեռէ ալ լացի։

Բ.

Սակայն մինչ դու մեռ էիր ինձ աստ երբեմն,
Մինչ կոխէիր դողդոջ ոտիւդ դրանս սեմն,
Գայիր պատմել ինձ արկածներդ, վիշտ եւ յոյս։
Տխուր խոհերս վայրկեան մը գէր տային խոյս։
Եւ խօսէինք յար վշտահար երկոքին,

Սակայն միմեամբք էր միշտ զուարթ մեր հոգին,
Դոգցես երկու դժբաղդ ոգիք երկրյած՝
Զգուած կեանքէն միմեանց դիպին վշտագգած։

Գ.

Ո՛րքան զուարթ լինել կեղծեմ, սրտիս խոր՝
Վշտաց ալիք կը կողկողեն մեծաժխոր։
Թէ կրնայիր կարկառել ձեռնդ կրծիս վրայ։
Պիտ՝ զգայիր որ հառաչիւք կը հեւայ։
Աւա՜ղ, եւ ես տխուր եմ յար վշտակիր,
Չի կորուսի հոգւոյս ընկեր կարեկիր։
Էր զի երբեմն մեք թեւ ի թեւ վազ ի վազ՝
Գարնան ողջոյն փուքայինք տալ հանապազ։։։

Անցա՜ն այլ եւս հեշտ վաղանցիկ օրերն այն։
Խոստմունք, յոյսեր եւ սիրային խոնք հատայն։
Արդ մենութիւնն մահատեսիլ պատէ զիս։։։
Սակայն ներէ՜, ընկերս։ կզգամ որ յուզի՜ս։։։։
Ափսո՜ս առ ի՜նչ արդեօք անցեալն յիշեմք յար,
Առ ի՜նչ կապրին այլ եւս սրտեր վշտահար։
Ընդէ՜ր զգալ վիշտն ու հրնուանք միասին
Եւ հի՞մ սրտից մէջ յոյս եւ թոյն կը հոսին։։։։

Դ.

Բաղդն ինձ պահեց ամենադառն իւր բաժակ,
Եւ համեցի զայն մինչ յեսին գորշ կայլակ։
Դառնացա՜ւ սիրտս եւ զգուեցա՜յ ես կեանքէն,
Հոգիս եւ միտքս զայն յայնմհետէ անարգեն։
«Երջանկութիւն չիք յաշխարհի, չիք եւ սէր»։
Ցերկին յառած աչերն ոգիս զայդ կըսէր։

Սակայն սիրել կըղձայի դեռ։։։ ո՜վ երկին
Եթէ չէ՜ր սէրն առ ի՞նչ տուիր դու մեզ կին։։։։

Ե.

Ունայնութիւնն իրօք կերգեմ աշխարհի,
Եւ կանարգեմ վաղանցիկ կեանքն այս վրդի,
Կեա՛նք խաբուսիկ ոյր մէն մի ժամն է երազ,
Ուր չես գիտեր թէ կա՞ս վաղիւ եւ գրնաս։
Սէր եւ հրնուանք, ժպիտ եւ յոյս խմբովին՝
Վարդից նման մի ժամէ վերջ թարշամին։
Եւ ի՞նչ մնայ յետ մեր մահուն յիշատակ։
Թէ ոչ մի քար եւ վաղաջի՜նջ մի քանդակ։

Սակայն այդ քարն որքա՜ն լինի պարզ անշուք,
Լաւ ե՜ւրս է ոգւոց համար։ տրտմասուգ։
Այդ վէմ դուռ մ'է մութ վրդի մը անյատակ՝
Ուր կը գրեն մահացուին յիշատակ։։։
Ա՜ն իցէ՜ թէ ունենայի պարզ մի քար։
Խոսոց ներքեւ։ եւ քանդակիչ մ'ալ անդ գար,
—Ձե՜մ ցանկար բնաւ ելնէ անուանս իւր գրչէ—
Ա յլ վիմագրե՜ր լոկ թէ «թշուառ մ'ասս ննջէ»։

ՏԻԳՐԱՆ ՇԱԼՃԵԱՆ

1887 Մայիս

ԱՌ ՕՐԻՈՐԴ ԱՆՆԻԿ

Ա.

Երեկոյ մ'էր, գիտե՞ս խաղաղ և սիրուն,
Որ չրջելու մեք կելնէինք յեզր ծովուն։

Ոյր կապուտակ ալիքներըն գունագեղ,
Վերջ կը տային խոհերուն մեր հանճարեղ։

Վերջալուսոյ կարմիր շողերն ծիրանի,
Քօղ ձգէին օրուան վրայ տաղտկալի.
Աստղեր անթիւ, պայծառ լուսին ի յերկնից,
Կը փայլէին ճաճանչագեղ, լուսալից։

Ճերմակազգեստ նազելահեմ աղջիկներ,
Հոյլք գեղանի սիրահամբոյր էակներ.
Եւ ընդ նոսին երամք փափուկ այն տիկնանց
Ճեմ առնէին ջուրց եզերքը յամրընթաց։

Իսկ ես հեռուն ծովափին մօտ խորհրդաւոր,
Երազոց մէջ ինկած էի հեշտօրօր.
Մերթ յածելով իմ աչերըն դէպ յերկին,
Կը դիտէի փայլուն ճաճանչն ես լուսնին։

Բ.

Գիշեր էր, և ամեն բան լուռ անշըշունչ,
Եւեթ լսուէր ձայն զեփիւռին հեզաշունչ.
Ուրախութեամբ կընթանային սիրադէմ,
Դասք նազելեաց զուարթութեամբ մեղմօրէն։

Եւ հեռուն ձայն քաղցրանուագ դաշնակին,
Զոր գեղուհակ մատունք կուսին ածէին.
Իսկ քիչ անդին երիտասարդք գեղադէմ,
Ման կուգային խոտոց վերայ վեհօրէն։

Առ հասարակ ամենայն ոք էր զուարթ,
Եւ հայեացներ ուղղէր սիրոյ յորդառատ.

Երգ և դաշնակ, ծիծաղ, ժպիտ և խնծիլ
Դըղըրդէին զայս տեսարան ակնխըտիլ։

Եւ չրջէի քայլամոլար և լռին,
Ցայս բերկրանաց Ովկէանին տրտմագին.
Որ զիմ հոգին չէր ըսփոփէր վշտալից
Ցոյզ, սէր, ժպիտ, խանդ և աւիւն ոգելից։

Գ.

Քեզնէ հեռի իմ ժամերըն տրտմագին,
Կանցընեմ ես յառանձնութեան սենեկին.
Առանց քեզի մի վիհ է ինձ տիեզերք.
Անլոյս, մթին, իւր որմերով սեւաներկ։

Տիւ եւ գիշեր թափառայած երերուն,
Քեզ կորոնեմ իմ քայլերով դողդոջուն.
Աւա՜ղ, ժամուն յանմիկ, զոր քեզ կորուսի
Եւ խաւարին բանտ դարձաւ ինձ՝ ծոց երկրի։

Քո մի հայեացքն, մի ժպիտըն կաթոգին,
Պիտի ջնջեն հառաչանքըն իմ սրտին
Ե՛կ, դու կուսան, մօտեցիր պահիկ մ՚առ խս,
Քեզ կը խնդրէ սիրատարփիկ իմ հոգիս։

Ե՛կ դարմանել իմ սրտիկըս կարեվէր,
Որ խոցերու վիհ մ՚է դարձեր անաւեր.
Քեւ պիտ՝ ժպտին իմ աչերըն նըւազկոտ
Տխրահայեաց, չիջելամերձ և աղօտ։

1885 Յուլիս

ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկեր ծիծաղկոs դէմով,
Դաշs ու ձոr լըցեr գոյնզգոյն ծաղկով.
Ելէf, հայ եղբարf, երթանք ի պsոյs,
Դաշsերուն մէջէն վազվզենք անփոյթ։

Մեխակ, մանիշակ, ամեն sեղ լցուեr,
Լեռ, ձոr ու դաշsեr են սիրուն պճնեr.
Թռչունք ճուռողեն ծառերու մէջէն,
Աշխարհ մեr համայն կը զարմացնեն։

Վsակք արծաթեայ, առուակներ վրնիs,
Կոռոգեն դաշsեr մարգազարդ հովիs.
Թիթռուռf sարմասարմ անվերջ ոsիւնով՝
Խինդ, աւիւն կազդեն մեr հոգւոյն խռով։

Մեղուն կը բզզայ, գոrsը կռնչէ,
Աղաւնին մնչէ, սոխակը կերգէ,
Ի՛ իրենց ձայներով հանոյf կառթեն մեզ.
Կուրախացունեն մեr սիrsն աղէկէզ։

Ելէ՛f ո՛վ մանկունք դուf յայս պեrն դրախs
Հաւաքել ուսանց ծաղկունք աաs եւ անդ.
Ոrf պիsի պճնեն ձեr միsքն արի,
Լինիլ յաշխարհի մարդ խոնարհ, բարի։

1886 Ապրիլ

ՊԱՆԴԽՏԻՆ ԿԵԱՆՔԸ

—

Ց'Էօտէմիշ մի տեսարանի ներկայ գտնուեցայ, որ սիրտս շատ յուզեց։ Երկու համարիւն եղբայրներ՝ հեռաւոր աշխարհէ, Մշոյ դաշտերէն դէպ յայն կողմ գաղթած, երկաթուղւոյ բանուորներ, բայց ո՛չ երկու, այլ հազարաւորներ՝ առ ի չգոյէ ապրուստի, թողլով իրենց բնակասնունդ երկիր, ընտանեկան քաղցր բնակարան, սիրակցորդ ամուսին, որդի, արտեր, արօր, եզներ ու կովեր եւ ամեն ինչ, որք իրենց սեփական են. դիմած օտարութեան՝ կենաց դառնագոյն բաժակը ցմրուր քամելու։ Ափսո՛ս, և որ ցաւալին է, այդ երկու բարեկամներ սրճարանի մ'առաջ նստած կ'արբենա՜ն... սրուակներ կը պարպուին ու կը լեցուին, բաժակներ իրարու կը բաղխուին և կենաց բարեմաղթութիւնք կը լինին, այլ չեն յիշեր իրենց կանայք՝ որք սիրով կը տառապին, զաւակներ՝ որք կարօտով կը մաշին։ Հո՜ն, հեռո՜ւն, հայրենեաց գիրկը անշուք տնակի՛ մը մէջ օրն ի բուն կը հեծեն վշտագին. սպասելով իրենց ամուսնոյն վերադարձին. այլ ո՞ւր է իրենց ամուսին, օտարութեան մէջ մաշուելով կը մաշի. մոռցած է զիրենք յաւէտ...։ Այս է՞ միթէ կեանք, այս է՞ երջանկութիւն յաշխարհի. ուր ենթարկուած են բազում դաւառացիք մերազնէից։

Ա՜հ, որչա՜փ դառն է այս կեանք. թո՛ղ չ'սպասեն այլ եւս նորատի հարսներ իրենց ամուսնոյն, զի նա օտարուհւոյն գիրկը կը ննջէ. հեշտութեանց մէջ կը լողայ... թող չխնդրեն այլ եւս զաւակներ իրենց հայր, զի նա մոռցած է խստառ հայրական

գորով եւ հայրենիք. Թո՛ղ լան իրենց անբաղդութեան վրայ, Թո՛ղ լան իրենց սեւ ճակատագրին վրայ, մինչեւ որ ցուրտ գերեզմանաքար մի զիրենք ծածկելու գայ. Թո՛ղ ամուսինն ևս այդ դառնատար կենաց մէջ մաշուելով՝ օտար երկրին ու հողին նուիրէ զիւր քաղցր արեւն ու կեանք. Թո՛ղ ամէն գարուն իւր վարդերով ու մեխակներով զարդարէ առաքինի կնոջ դամբարան, եւ անմոռաց պահէ դորա յիշատակ։։։

1888 Oqnusnu

ԻՄ ԿԵԱՆՔԸ

Գարնան վարդից և ծաղկանցըն այն նման
Բուրումնագեղ.
Որք կը փթթին պարտիզաց մէջ, դաշտաց վրան
Պճնին ցեղ ցեղ.
Ընծայելով մեզ բոյր մ՝անոյշ, խնկալից,
Կենդանատու.
Եւ զովցընեն մեր սրտերըն վշտալից,
Են յուսատու...
Ո՜հ, իմ կեանքն ալ այսպէս անցաւ ընդ այգուն,
Նման ծաղկանց.
Որք այնքան վա՜ղ Թոռմին, Թափին հողերուն,
Դեռ չբացուած.
Սեւ տխրութեանց, վշտերու մէջ անյատակ,
Նուաղ բեկուն.

Կը Թափառիմ քայլամոլար երկնից տակ,
Սրտիս նկուն.
Յայսմհետէ այլ ես կեանքըն կատեմ ես
Այս վաղանցիկ.
Շա՜տ իսկ կըղձամ մեկնիլ ես այս աշխարհէս,
Լռիկ, մնջիկ.
Չի չունեցայ մի օր, մի ժամ որ ուրախ
Եւ զուարթուն՝
Վայելէի կենաց հաճոյքն անյապաղ,
Այդ սիրաբուն
Էակներու՝ հրեշտակաց երկրային,
Փափուկ քնքոյշ,
Որք պարգեւեն մեզ սէր եւ կեանք կաթոգին,
Են յար անոյշ։
Եւ արդ զուրկ յայս ամէն բարեաց սիրակաթ,
Ցուսակտուր,
Կեանքէն զզուած կը Թափառիմ աստ և անդ,
Մենիկ, տխուր...
Ա՜հ, իցէ Թէ անցորդ մի յետ իմ մահուն,
Գայր վաստակած
Տխուր դէմքով, կթոտ քայլիւք դողդոջուն,
Սնարս կեցած.
Շիթ մ՝արտասուք, փուչ մի ծաղիկ դոյնզդոյն.
Թափեր վրաս։

1887 Յուլիս

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՍՈԽԱԿ

Սոխա՛կ, ի՞նչ ահ, ողբ անսպառ,
Տակաւ նիւծի մարմինդ նիհար.
Է՞ր դու ողբաս զօր հանապազ,
Վիշտ քո ծածուկ յայտնել փութաս։
Զը կա՞յ արդեօք մի ընկեր քեզ,
Ի վարդանոցն կամ ձայնակից.
Կենաց աշունն ալ վիշտ ունի,
Կամ թէ ցաւն ալ վախճան մ'ունի։
Պըղպեղա՞ց դու յայտնես քո կաց,
Խօսակցութիւնն այդ յակընթա՞ց.
Նարգէսն ձայնովդ լինի արթուն,
Մինչեւ զգալ ձանձրոյթ թուչնոյն։
Վայե՞լ է քեզ միշտ անդադար,
Այս ասիենան գոլ շնչասպառ,
Զերդ մի թիթեռ անձայն դու լե՛ր
Նէրմայ յայտնէ՛ թէ ունիս սէր։

1890 Նոյեմբեր (Թարգ. ի Թուրք.)

ԱՌ ՄՕՐԵՂԲԱՅՐՆ ԻՄ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ԵՒ ՏԱՐԱԲԱՂԴ

—

Ս.

Երկար ամեր պանդխտելով անցուցիր,
Յօտարութեան ի տար աշխարհ ման եկիր.
Հեռի տընէդ քո հայրենի սիրական՝
Կեանք մ'անցուցիր սեւ եւ տըխուր, մենական։
Օտար ասեղց, մըթին երկնից տակ վայրաված՝
Մերթ դնելով քո գլուխդ վաստակած,
Մտածեցիր կամ խոկացիր դու անդրէն,
Մուր գիշերոյն ստուերաց տակ տխրադէմ։

Մինչ դու խոնջած վերադարձար հայրենիս,
« Մնաք բարեա՛ւ » ըսիր դու մեզ, սիրելի՛ս.
Մինչ նաւն բաժնեց զքեզ սիրուն Վոսփորէն,
Կարծես հառաչ մ'անցաւ ուրիս իմ խորէն.
Ըսի մտքէս թէ — պիտ' դառնաս միանգամ
Թէ՝ պիտ' տեսնեմ զքեզ առոյգ քաջակազմ. —
Բայց վա՜ղ, վերջին գնալդ եղեր է անդարձ,
Վերջին յոյսերդ ալ մարեցաւ մըթնցած.

Յորմէ հետէ երկու ամեր սահեցան,
Բայց իմ սրտէս հիւծիչ հառաչք ա՛լ չանցան.
Քո կարօտդ եւ սէրդ զիս շուտ մաշեցուց,
Քաղցրիկ յուսովք զիս հանապազ օրօրցուց.
Փափաքեցայ գէթ մի անգամ ելնել յայց՝
Եւ լիովին տեղեակ լինել քո վշտաց.

Առ քեզ մնալ մի ժամանակ, ո՛չ յաւէտ,
Համբերելով բաղդին բերմանց դառնաղէտ։

Բ.

Անցած էր ցինն եւ Նոր տարին էր եկած։
Ամենքն սիրոյ, խնդութեան մէջ են ընկած։
Միմեանց նոր օր, եւ *Նոր տարի* մաղթէին,
Ցնծութեան ձայնք ամեն ուրեք լսուէին։
Ցայնժամ եկաւ ինձ մի սեւ գոյժ բօթաբեր,
Հարուածեց զիս եւ սրտիկրս կարեվէր։
«Մեռա՛ւ» ասին ինձ՝ մօրեղբայրդ յանկա՛րծ։
Դող մ'եկաւ յիս եւ դողացի սարսափած։

Ուրեմն վերջի՛նը էր մինչ ինձ խօսեցար.
Վերջին պատուէրդ տուիր դու եւ մեկնեցար։
«Ո՛ն, Ստեփան, մի ընդունայն դեգերիր,
«Ըսիր ինձ յայս վայր քարուս եւ կարեկիր։
«Քեզ չեն գրքար ո՛չ այս երիտք գորշագոյն,
«Ո՛չ այս երկինք, որք քեզ համար են մրթագոյն»։
Եւ ա՛րդ, ինչպէ՞ս չը լամ, չ'ողբամ քեզ համար,
Մինչ չանսացի քո խօսիցդ փրկարար։

Վա՜ն, մօրեղբայր, ինչո՞ւ դու վաղ չուեցիր,
Ցուրտ շիրմին մէջ պառկած՝ սեւ հողն գրկեցիր։
Եւ թողեր ինձ յիշատակդ անմոռաց,
Ցաւերդ անհուն եւ վշտերդ անթափանց։
Ա՜ն, թէ մի օր ուղեւորիմ դէպ յայդ կողմ,
Պիտ' այցելեմ քո պարզ շիրմիդ սեւահող.
Եւ պսակներ դնել դափնեայ ոսերով,
Եւ արտասուօքս թանալ հողդդ կարօտով։

1886 Օգոստ.

ՅՈՒՇՔ ԱՆՑԵԼՈՅՆ

—

Ա.

Ինչո՞ւ արդեօք ամեն գարնան երբ կը ծլին ծաղիկ խոտ,
Կը յիշեմ ես մի երազ,
Որ հեշտագին մրափեցոյց զիս մի գարնան առաւօտ,
Մինչ գեղգեղէր երգիչ սոխակն եւ բուրէին անոյշ հոտ
Համայն ծաղկունք նորահաս...։

Չը գիտեմ է՞ր, մինչ կը զարթնում գարնանային լուսոյն հետ
Ափն ի ծընօտ կը մընամ,
Պատուհանիս առաջ, ուր մարգ եւ դալարիք վէտ ի վէտ
Առաւօտեան մեղմ զեփիւռէն կը ծածանին կենսաւէտ,
Եւ ընդ ծաղկունս հիանամ...։

Եւ է՞ր յայնժամ մի յոյզ հեշտին եւ երջանիկ կզգամ ես
Ի տես բնութեան այդ զարթման.
Եւ խոհիդ մէջ սուզիմ համակ, մինչ կը լսեմ չորս կողմէս
Անմեղ թռչնոց զմայլելի գեղգեղանքն, որք զոգցես
Էին մաղթանք կը կարդան։

Եւ է՞ր արդեօք եւ յանկարծուստ կը մթագնի իմ հակաս,
Իբրեւ երկին ի ձմրան,
Եւ իմ աչեր է՞ր ուրեմն կը գունատին սրգապատ,
Մինչդեռ սիրուն է ամեն ինչ, եւ ընդ դաշտն այն ծաղկապատ
Թիթռունք զուարթ կը սուրան։

Չէ՞ զի գարուն գեղատեսիլ գայ անդրէն
Ցանել ծաղկունս ամեն տեղ,
Չե՞ն նոյն մարգեր, դալարազարդ համօրէն,
Եւ նոյն զեփիւռ չ'է՞ որ զգուէ մեղմօրէն
Մանուշակն այն աչագեղ։

Բ.

Այո՛, նոյնն է անոյշ գարուն կենսատու,
Եւ նոյն զեփիւռ խնկահոտ,
Նոյն են գեղգեղք հրմայիչ, պերճ եւ ազդու
Սոխակին այն սիրատենչիկ՝ որ առտու
Եւ երեկոյ գայ մեզ մօտ։

Սակայն աւա՜ղ, տրխուր եմ ես զի միայն
Նոյն չէ տեղին երջանիկ.
Զի չէ նոյն մարգ, նոյն բարեբաղդ պատուհան
Ցոր ակնապիծ կսպասէի գալստեան
Սիրուհւոյն իմ գեղեցիկ։

Գ.

Ոսկի էին նէրա մազեր ցիր եւ ցան,
Լուսնաձոռին չափ աղուոր.
Այնն էր մի նուռ, աչկունք լուսոյ աւազան,
Եւ մինչ զոյգ բերբ վարդի իրար միանան՝
Կազմեն շրթներն մեղրածոր։

Չէ նոյն խրցիկ պարզ եւ անզարդ ու խաղաղ
Ուր ամեն ինչ էր սիրուն,
Ուր զսառաջինն ծանոյց ինձ սէր մի մատաղ,
Ցորում նանչցայ երջանկութիւնն հոգեզբաղ,
Ջերմ բազկաց մէջ փափկասուն։

Ուր սիրային ամենաթաղցր խոստումներ
Կը կրկնէր ինձ մի սիրտ նոր,
Հնգեսասան ամաց տեսած գարունները.
Անբիծ նակաս, սիրատրոփ կուրծ, եւ աչքեր՝
Ոյց գոյն երկնից էր շընորհ։

Դ.

Անցի՜ն, անցի՜ն այժմիկ օրերն այն երջանիկ,
Որպէս ստուեր լուսոյն հեռ,
Մի յուշ տրխուր թողլով բաժին ինձ մենիկ,
Որպէս երազ մի վարդագոյն եւ թաղցրիկ
Թողու խոհուն զոք յաւէ՛տ։

Եւ անա էՙ, մինչ կը զարթնում ի գարնան,
Ափն ի ծընոտ կը խորհիմ.
Ցեռեմ զանցեալն, եւ աչկունք իմ մրբանան,
Եւ իւրովի կըսեմ, «Ո՞ւր, վաղ ընթանան
Ժամք երջանիկ» եւ տխրի՛մ...։

Տ. ՇԱԼՃԵԱՆ

1889 Մարտ



ԱՌ ԳԵՌԱՏՒ ԱՂՋԿՈՒՆՍ

—

Զուարթ էք դուք և կը կայտռէք թեւ ի թեւ,
Ելթերին տակ·
Պարտիզաց մէջ հովանաւոր հեւ ի հեւ,
Անմեղունակ·
Ձեր շուրջ պատեն լեռ, ծառ, ծաղիկ երփներանգ,
Եւ դալարիք·
Առուին խոխոջն, թռչնոց սիրուն գեղգեղանք
Մելամաղձիկ։
Ունկըն դրէ՛ք ի ձայն երգոց սոխակին
Զուարթարար,
Որ անդ կերգէ ի խորս թաւուտ անտառին
Մթապարար։
Պարեցէ՛ք դուք անմեղ կուսանք, լուռ անձայն
Ազատ արձակ·
Ձեր կենաց այդն մի անցընէք ընդունայն,
Տրխուր համակ·
Գացէ՛ք դպրոց, ուսման պարտէզն այն սիրուն,
Անուշաբոյր՝
Հաւքել ծաղիկ՝ պերճ գիտութեանց գոյն ի գոյն
Եւ թոյր ի թոյր·
Որով պճնէք ձեր ճակատն կուսական
Եւ միտքն արի·
Լինել բարի, հեզահամբոյր, խոհական
Առաքինի·
Համեստութիւնն է օժիտ սոսկ՝ աղջկանց,
Անգին գոհար·

Որով պիտի պճնէք ձեր միտքն աննախանձ,
Վայելչաբար.
Պարկեշտ եղէ՛ք դուք ո՛վ կուսանք ժըրաջան,
Թո՛ղ չար կրքեր
Շո՛ւտ ձեր մոքէն թո՛ղ բաժնուին հեռանան
Իբրեւ հովեր։
Պիտի փայլի վերեւ ճակտին ձեր անբիծ,
Պսակ անթառամ.
Պսակ սիրոյ և հեզութեան լուսագիծ,
Աստղանման.
Յայնժամ և դուք պիտ՝ լինիք զերդ հրեշտակ,
Անմեղ յաւէտ.
Երկրէն բարձըր պիտ՝ թռչիք ձեր ոտից տակ,
Թո՞ղուք մի հետք...։

1888 Յունիս

ԱՍՏՈՒԱԾ ԱՆԲԱՆԻՑ ԳՈՄԻՆ ՄԷՋ

—

Լուսնկայ գիշեր մ՚էր, երկինքը պարզ, աստղերը լուսապաղպաջ և պսպղուն. արծաթեայ լուսնին ճառագայթներն կը լուսազօծէին Սաղիմայ տաճարին գմբէթը, Պաղեստինու դաշտերը։ Խորին լռութիւն մը համասփիւռ տարածուած էր, հովիւները բացօդեայ կը ննջէին. յանկարծ այդ համատարած խորին լռութիւնը կընդհատի երկնային Զուարթնոց հոգետաւիղ նուագներով։

Ի՜նչ նորահրաշ տեսիլ, Արեւելքի հորիզոնին վրայ կը փայլի աստղ մը զարմանահրաշ և բոցաճաճանչ. երկին կը բացուի, և փոխանակ մահկանացու երգիչներու՝ հրեշտակներ կերգեն։ Այս աստղը ո՛չ չքնագեղ մէտէորի մը և ո՛չ սովորական յաւէրժարփիներու կը նմանի. սիեզերական դղրդիւն մը ամենուրեք իւր արհաւիրքը կը սփռէ. կարծես գիշերուան մթոյն մէջէն ինչպէս հրդեհի մը բոցերը՝ այնպէս դուրս կը խոյանան արծուեթռիչ և ապագանչմար մարգարէից յաղթական հանճարները։

Արքայք ի քառից ծագաց աշխարհի թողլով իրենց գանձն ու ծիրանին, կը փութան մանկան մը պատարագ մատուցանելու։

Եւ ո՞վ է այդ մանուկը. — Գոմ մը կը տեսնեմ խարխուլ ու կիսափուլ. հոս կով մը կը բառաչէ, հոն ոչխար մը կը մայէ, անդին այծ մը կը պապաջէ, իսկ քիչ անդին աղտոտ ու փոշոտ մուրի մը մէջ ցնցոտի գրգլեակներու փաթթուած մանուկ մը. այլ սակայն համակ ճառագայթներու մէջ. և այդ մանուկը աշխարհի Փրկիչն ու հեթանոսաց լոյսն պիտի լինի։

Արեւելքի այն նշանաւոր աստղն այդ մանկան աստուածութեան ու մթութեան մէջ թագուն պահուած ապագայ լուսաւորութիւնը կը յայտնէ։

1887 Յունվար

ՀՐԱԺԵՇՏ ԱՌ ՈՒՍԱՆՈՂՍ ԻՄ

—

Աւա՜ղ, մանկունք, պիտ՝ թողում ձեզ անխընամ,
Անյոյս լքեալ.
Ըմպել բաղդին բաժակն լեղի դառնահամ,
Ինձ պատրաստեալ.
Պիտ՝ բաժնուիմ ի ձէնջ անդարձ յակամայս,
Երթալ այլուր,
Յերկիր օտար, թողուլ զձեզ հանապազ
Յուսակտուր.
Էր երբեմն, զի ուրախ էր սրտերնիդ,
Զուարթագին.
Վազվզելով ինձ կը գայիք անակնկիտ,
Հետաքննին.
Հարցնել մի բառ, սովրիլ ինչ որ պիտանի
Ի ձեզ համար.
Լինել գիտուն, մարդ խոհական, սիրելի
Եւ օգտակար.
Խուզել, քննել ամեն իրերն աշխարհի
Վեհ գիտութեան.
Բոլոր գաղտնեաց տեղեկանալ լիուլի,
Զըլլալ անբան։
Եւ արդ՝ մանկունք, մաղթեմ չնորհ ձեզ՝ և սէր,
Իմաստութիւն.
Որովք փայլիք ապագային անստուեր,
Իբրեւ գիտուն։
Բարեա՜ւ մնայք, Երկին ընդ միշտ ձեզ պաշտպան,
Պայծառ արեւ,

Աստեղք անթիւ, փայլուն լուսինն աննըման՝
Երկնից վերեւ
Պիտի չողան, լուսաւորեն ձեզ մըթոյն,
Լապտերք միշտ վառք՝
Որք կը փայլին եթերց վերայ չողշողուն,
Իբրեւ գոհարք.
Յայնժամ սրտիս երախտագէտ և զեղուն,
Զիս յիշեցէք.
Եւ անմոռաց ձեր սրտին մէջ իմ անո՜ւն,
Բանդակեցէ՛ք...։

1887 Սեպտ.

ԵՒ Պ. Տ. ՇԱԼԺԵԱՆ

—

Կը յիշե՞ս, եղբայր, այն երջանիկ օրը — երի՜ցս երջանիկ — յորում միատեղ կը շրջէինք նահանստուեր յանտառակին առանձինն և մտախոհ։ Երեկոյեան անոյշ զեփիւռը կանաչագեղ ծառոց տերեւներուն մէջէն սահելով մեղմ սօսափիւն մը կը ձգէր, բաւական սըրտում կերեւէիր այդ օր, զի վիշտերդ յանհունս ծանրացած էր, վիշտ՝ զոր մեր քաղցրիկ ընկերակցութիւն տակաւ փարատել ջանայ։ Մերթ տխուր և մերթ ուրախ գաղափարօք համակուած կը խորհրդածէինք ներկային և ապագային վերաբերմամբ։ Կը յիշեցնէիր ինձ դու, Սէնիւ ընկե՛ր, օրուան տաժանելի և քրտնաթոր աշխատութիւնդ, վաստակոցդ ապարդիւն մնալն, սիրտդ կրծող վէրքերն ևն. վերջապէս մելամաղձ վիճակիդ տխուր նկարագիրն պարզելով սըրտակցիդ՝ դժբաղդ կանուանէիր զքեզ։

Ո՛չ նուազ դժբաղդ է և քո ընկերակից, Տիգրա՜ն.

զի ուր իւր բաղդն որոնեց, անդ խոչեր ու խութեր գտաւ. ուր երջանկութիւն յուսաց, հոն միշտ փուշ և տատասկ գտաւ. երբեմն ոսկեղէն երազոց մէջ ընկելուզեալ ճանապարհորդեց յԱրեւելս, յուսալից իւր ապագային նկատմամբ. բայց հոն եւս չուշացաւ դժնեայ բաղդն իւր երկաթեայ ժանեօք հարուածելու. վերջապէս մեր յուսոյ և երջանկութեան հորիզոնը սեւ ամպով մը մթագնեցաւ. վիշտ և թախիծ եղաւ միայն մեր բաժին, մինչ ուրախութիւն կսպասէինք. կեանքն այլ եւս մեզ համար ծանր բեռ մ'եղաւ, զոր ճոխագոյն մեծատունք այնքան սերտիւ գրկած են... բայց բաբէ՜... ի՞նչ է կեանքն. — երջանիկներու համար հեշտութեան օրրան մը՝ իսկ դժբաղդներու՝ ցաւոց Ովկիան մը, որոյ մէջ որքան ալ տատանին, խաղաղութեան նաւահանգիստը հեռի է նոցա համար։ Երջանկութեան հորիզոնը ընդ միշտ սեւադէմ ամպերով ծածկուած՝ ահարկու կարկուտներ կը տեղացնէ մեր գլխուն որոտմամբ և չանթիւ...։

Գիտեմ, եղբայր, բազում են քո ցաւեր, և չեմ ուզեր ձեր վշտերն բազմապատկել սոյն տխուր նկարագրութեամբս. այլ ի՜նչ օգուտ. վշտահար սրտի մը կայծերն են սոքա, զորս չեմ կարող թագուցանել երբէք։

Ե՛կ, բարեկամ, ելնե՛նք սա մարգաղարդ բլուրը. տե՛ս, ինչպէ՜ս գեղեցիկ է լուսինը. կապոյտ երկնից տակ, բազմահոյլ աստղերն կը շողան. իսկ վարը դալարագեղ մարմանդից վրայ կը ճարակին խաչինք. առուակին հեզիկ մրմունջն և հովուին հեշտասոյլ սրինգն մեր ականջները կը գգուեն... մանաւանդ սոխակին հոգեզմա՛յլ երգն...։

1885 Մայիս

ՅՈ Զ. Ս. ՓԱՓԱԶԵՓՆ

ԱՆՁԿԱՆՔ ՍՐՏԻ

—

Մինչ զով այերք ընչեն չորս դիս հեղագին
Լոյս, օդ և բոյր անուշակ,
Մինչ ողջունեն բնաւք զգարուն ժպտագին,
Եւ տխուր քօղք ձմեռնային կանհետին,
Եթերին տակ կապուտակ.
Մինչ բընութիւն դալարներով կը պճնի,
Ձերդ պատկառոտ մի կոյս աղջիկ գեղանի,
Մինչ սոխակին գեղգեղք լսուին հոգեզմայլ,
Եւ խոլ ծիծառն մեր գլխուն վրայ սաւառնի,
Լսուին թռչնոց հեշտ դայլայլ...

Երբ ամեն ինչ գոգցես ժպտի ի բնութեան,
Մռայլք յերկրէս կը կորչին,
Եւ արտոյտներ քաղցր ալելու կը կարդան,
Ցօղաթուրիկ ծաղկանց, խոտոց մէջ առտուան,
Համայն բարեաց Արարչին.
Մինչ գեղուհիք մեղմիւ բանան զիւրեանց դուռ,
Եւ խմբովին առնեն զխոտս առաթուր.
Պարեն, խայտան և ի ծաղկանց չինեն փունջ,
Եւ տոթակէզ գիմեն ըմպել զառուին ջուր.
Ոյր հեզ և մեղմ է մրմունջ։

Պէտք չէ՞ յայնժամ զուարթանայ և իմ սիրտ,
Փարատին վիշտս ու թախիծ.

Պէտք չէ՞ ջնջեմ մահասարսուռ ցուրտն այն քիրտ.
Եւ այն խորշոմք, զոր բաղդին ձեռն գծեց բիրտ
Ճակտիս վերայ, պարզ անբիծ.

Եւ այդ հրճուանք պէտք չէ՞ նաեւ ինձ ազդեն.
Հարկ չէ՞ որ լոյսք սրտիս մէջը փարատեն.
Որ ի վաղուց կենացս ուղին է մթագնած.
Եւ այդ երգեր պէտք չէ՞ որ զունկս իմ գգուեն
Որք ցարդ յողբոց են յոգնած...:

Ո՞չ ապաքէն պարտիմ լքսել ես զայն ձայն,
Որ ի հեռուստ գայ մեղմիւ.
Անթիւ սիրուն հրեշտակաց պէս համայն,
Որք կապտալոյս եթերէն վեր համաձայն,
Երգեն զցայդ և զտիւ.
Զայն՝ զոր բընաւք հեզ ի մրմունջ արձակեն՝
Մարդիկ, թռչունք խակ իւրեանց նեղ վանդակէն.
Զայն՝ որ հոգւոյն ազդէ սարսուռ հեշտագին.
Բանտարկելոյն խակ հայել տայ իւր խցկէն.
Թէպէտ աչօք տրտմագին:

Ո՞չ ապաքէն գէթ առ վայրիկ մ'իմ հոգին
Պարտի մոռնալ զիւր մեծ վիշտ.
Եւ սեւասքօղ աչկունքս պէտք չէ՞ որ հանգին,
Յառեալ բնութեան անոյշ վսեմ երանգին
Զոր մարդ, տերեւք հագնին միշտ.
Եւ շրթներս ալ պէտք չէ՞ օրհնեն զարշալոյս.
Եւ քաղցր աւաչք հաւուց պէտք չէ՞ տան ինձ յոյս.
Երջանկագոյն մի այլ կեանքի հոգեզուարթ.
Երբ ամեն ինչ առնու նոր բոյր և նոր լոյս,
Երկին, ընձիւղ, ցօղ և վարդ...:

Ո՛չ, յաւէ՛տ ո՛չ, զի սրգակիր մի պատկեր.
Երեւի իմ աչաց ցանդ.
Մի ստուեր, էակ մ'որ անհունին մէջ ինկեր.
Թշուառ հոգի մ'ոյր անբաժան են ընկեր
Արտասուք, վիշտք, հառաչանք:
Տրխուր էակ, յաւիտենից սահմանեալ,
Բայր հոգւոյն բաղդն գոգցես միայն է ասա լալ.
Եւ յայս աշխարհ, որ քաղցր երբեմն է մարդոյն.
Գոգցես եկած է հառաչել եւ խոկալ.
Անուրջներով դառնագոյն:

Որ ի վաղուց ունէր ձեռին մի բաժակ
Դառն հեղուկով լիուլի,
Եւ զոր ո՛րքան ջանաց ըմպել փութակի
Այ՛նքան ցաւեր զգաց հոգին վշտահակ
Իւր սիրտ եղաւ վիրալի:
Որ մի դրոշմ ունէր դժխեմ ընդ ճակատ,
Մի դրոշմ անեղծ, զոր կը կրէ քիչ անհատ.
Ի սկզբանէ չուառութեան գծած մրուր,
Եւ կը քայլէ կը թափառի անընդհատ,
Միշտ յուսարեկ և տրխուր:

Եւ այդ էակ, զոր կ'երազեմ ես յաւէտ,
Ընկե՛ր դու ես այդ էակ.
Դու զոր տեսնեմ ցր դեղերիս բաղմաղէտ,
Եւ վշտագին հայիս բնութեան խնդաւէտ,
Ընդ տիեզերս միայնակ:
Կամ ընդ շաւիղս լերանց, բլրերց թաքթաքուր,
Յանապատի՝ զոր բնաւք չանցին առաթուր.
Զեռն ի ծնօտ, թախիծ ի սիրտ անշշունչ.
Զողջոյն գիշեր նստիս աչկունքդ մրթակուր.
Եւ հառաչիցդ լսուի մռունչ:

Զերդ մի թռչնիկ որ բոյնէն վար գլորուած
Կը թրթռա՛յ անհնարին...։
Մի սիրտ ազնիւ, որ ի վաղուց է խոցուած.
Եւ ուր այնչափ յիշատակներ կան թաղուած,
Մահատեսիլ, ցաւագին։
Եւ որ յաւէտ կը դեգերի աննահանջ,
Ծով, լեռ, բլուր, գետ, խութ, մացառ փշատանջ.
Գէտակն յերկիր, կորագլուխ, տրտմագէմ,
Որոնելով ի զուր սրտին իւր սպահանջ,
Եւ մի դարման ցաւոյն դէմ։

Սակայն ընդ վայր յուզիս, ո՜վ իմ Ստեփան,
Կտրես, անցնիս լեռ և ձոր.
Ընդ վայր ճգնիս գտնել ցաւոյդ մի դարման,
Չի կան ցաւեր, որք մութ են զերդ դերեզման,
Եւ նորա չափ խորախոր։
Զո՜ւր դեգերիս անմխիթար յուսահատ,
Գիտցիր որ մերթ յաշխարհի աստ մըթապատ.
Պիտի լինին էակք զերդ մեզ վշտագին,
Ոյց տխրութիւն գրուած է սեւ ի ճակատ.
Մելամաղձոտ է հոգին։

Որոց համար չեն բնաւ սէր, վարդ եւ հեշտին
Լոյս, բոյր, ծաղկունք երփներանգ
Եւ այս աշխարհ մի քաոս է խաւարչտին,
Ուր եկած են յաւէտ ողբալ անդստին՝
Իւրեանց բաղդը սեւազանգ։
Այլ միայն երբեմն տեսնեն նոքա նուրբ մի ջրդ,
Հեռի՛, հեռի՛ հորիզոնէն մթասքող։
Մի էակ, զոր այլք անկարող են յար տեսնել,
Մենութիւնն է այդ լոյս էակ ըսփոփող,
Անհունութեան մէջ անել...։

1888 Օգոստոս

Տ. ՇԱԼՃԵԱՆ

ՀՐԴԵՀ

Շառագոյն բոսորափայլ հեղեղ մը կողողէ հորիզոնը, միգամած և թանձրախիտ ամպեր կը պատեն երկնից յաւէրժարփիքը. քաղաքն համայն բոցալիր է։ Ուր որ կը հասնի բոցը՝ նման անագորոյն արիւնկզակ աշխարհակալի մը՝ աւերակ ու կոտորած կը սփռէ. հոս մանկիկ մը կիսայրեաց. հոն պալատ մը կիսափուլ. անդին եկեղեցի մը ի բոց մղուած. ասդին ամբողջ թաղ մը յանիւն դարձած. հոս թանձր ծուխին մէջ մին իւր մայրը լալահառաչ կը փնտռէ, անդին հեբարձակ մայր մը խիտարկեալ կորոնէ իւր միածին և միամօր որդեակն։ Ամենուրեք բոցն ու արցունքը, ծուխն ու հառաչանքը իրար խառնուած աղէկտուր և սրտառուչ տեսարան մը կընծայեն, որոց վրայ նայուած ատեն ապառաժէ և մարմարէ աւելի կարծր սիրտ մ'ունեցած լինի եթէ մարդ, յարտասուս կը լուծուի և կը փղձկուի։

1885 Յուլիս

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

Ա

ռաւօտ մ'էր լուսապայծառ,
Մինչ արեգքն շող շող ծրփայր,
Երանց կատարն վերայ ծովուն,
Մարգաց վրայ թարմ ցողասուն՝
Կը փալփլէր տերեւ, ծաղիկ
Դաշտօրէից՝ խնկաբուրիկ.
Համակ իրերն ոսկեզօծեալ՝
Կը շողային ոգեւորեալ.
Եւ բընութիւն նորազարթոյց՝
Գալարազգեստ տե՛ս... ճոխացոյց
Դաշտք եւ բլուրք, հովիտ, անտառ,
Գոյն գոյն ծաղկամբք համեստաբար.
Առուին՝ խոխոջ, խոտոց սիրուն
Տըւաւ սփռոց կանաչագոյն:
Սոյն այս պահուն մի գեղջկուհի,
Սափորն ի յուս կերթար ջրի.
Պարզազգեստ, մազերն արձակ,
Այլ գեղանի, յոյժ կարմրորակ,
Իբրեւ մի վարդ կամ մանիշակ,
Պարկեշտագեղ լուսադիմակ,
Կուրծքն սպիտակ եւ ծիւնաթոյր.

Անցորդք տենչան առնուլ համբոյր։
Մարմինն ուժեղ, հոգին առոյգ,
Չէր կրած նէ բընաւ վիշտ, սուգ։
Քայլէր արագ, վեհ ու սրտոտ
Այլ իւր դէմքն էր յոյժ պատկառոտ։
Եւ սոյն պահուն հոգեհիմայ,
Զմայլանօք առ նէ դարձայ։
Տեսի զինքըն առանձնակի,
Զուարթ դիմօք նայէր ինծի։
Կուժըն դըրած աղբիւրին քով՝
Որ կը վազէր առատ եւ զով։
« Էջ, օրիորդ » ըսի յանկարծ,
« Այսչափ կանուխ աճապարած,
« Ընդ առաւօտս այգուն այգուն,
« Կրէք այսչափ մեծ յոգնութիւն,
« Մեղք չէ՞ միթէ ձեր փափուկ ուս,
« Որ տանջուի գէթ այս պահուս։
« Մեղք չե՞ն միթէ ձեր բազուկներ,
« Որք կը կրեն այս մեծ կուժեր։
« Հետեւէ՛ ինձ, ե՛կ շուտ երթա՛նք
« Դէպ յանտառն։ հոն կը գտնանք
« Մեր երազոց իրագործման
« Տեղի սիրուն եւ ապաստան։
« Ի խորս թաւուտ մայրի ծառոց՝
« Մեր բաղձանաց հեշտ օրօրոց։
« Թո՛ղ որ ծրծենք մենք անոյշ օդ՝
« Փարեալ միմեամբք մեք սիրայօդ։
« Թո՛ղ որ ազատ սիրեմք զիրեար,
« Եւ բնութիւնն օրհնեմք արդար՝
« Մաքուր շրթամբք անկեղծօրէն,
« Որ պարգեւեց մեզ այսօր էն »։

Այս որ լսեց, նէ շիկնեցաւ,
Վարդի նման կարմրեցաւ.
Սիրտն ալ արդէն կը բաբախէր,
Կզգար սէրըն՝ որ զինք տանջէր։
Պատեհ առթէն օգուտ քաղեց։
Քնքոյշ բազուկն ինձ երկարեց։
Եւ միատեղ խօսակցելով,
Հասանք անտառն կանաչ եւ զով։
Հեռի մարդկանց եւ յանամնոց,
Ջը կար գազան եւ վայրի օձ։
Զայն գըրկեցի անկշտօրէն,
Համբոյր մ՚առի իւր այտերէն,
Ինքն ալ կարծես թէ չէր մերժեր,
Իւր կենակիցն զի՞ս ընտրած էր...։

1890 Մայիս

Նոր Տարի

Տարի մ՚ալ անցաւ, գընաց, սահեցաւ,
Մեր հորիզոնէն աստղ մ՚ալ պակսեցաւ։
Ցիշատակներու մի անհուն ծրար՝
Քաղցր կամ տխուր եւ սեւանըկար,
Թագեաւ անցելոյն պահարանին մէջ,
Անցելոյն տըխուր՝ որ սահի ի մէնջ։
Բիւր երազներու քաղցր յիշատակներ,
Թողուց նա ի մեզ եւ սեւ ստուերներ։

Մռայլ էր երկին, ծիւնաբեր ամպեր,
Շուրջ պատեալ ըզմեօք ծաղկէին զեթեր.
Քամին սասս կաշունչ հալածէր զամեն,
Մարդիկ, անասունք իւրեանց ուղիէն.
Ձիւնի հատիկներ խոշոր, ըսպիտակ,
Տեղային անվերջ հորիզոնին տակ.
Ամենքս միասին տան ներսը քաշուած,
Աղօթս առնէինք առ բարձեալն Աստուած։

Ծեր եւ կտրիճ, կոյս, պատանի, խմբուած,
Մի ընտանեկան յարկի տակ նստած.
Ուրախ երգերով ճրչեր արձակեն,
Զուարթ դիմօք *Նոր տարին* կողջունեն.
Կը մաղթեն միմեանց՝ նոր երջանկութիւն,
Երկար տարիներ եւ յաջողութիւն.
Խնդայ ամեն ոք, կը բերկրին սրտեր,
Անհուն զգացմամբք կը լեցուի եթեր։

Եւ զուարթօրէն մանուկներ կերգեն,
Հոյլ ի հոյլ եւ թեւ ի թեւ կը պարեն.
Խինդ եւ ժպիտ եւ զգացմունք կաթոգին,
Անկեղծ շրթներէ հակիրճ դուրս զեղուին.
Այգուն վարպետին կերթան վազելով.
Իրենց ընծայներ սիրով տանելով.
Նոցա փոխարէն կընդունին գրքեր,
Սիրուն պատկերներ եւ այլ նուէրներ։

Ապա տուն դառնան զուարթ քայլերով,
Խնդան եւ հրճուին ընդ միոտ կայտռելով.
Այսպէս կանցընեն նոքա օրն ի բուն;
Զերդ հրեշտակներ երկնից զուարթուն.

Զունին վիշտ, արցունք, հառաչ տրտմասուգ,
Սրտամաշ վէրքեր, որք հիւծեն զանոնք.
Կանցընեն տարին այսպէս խնդութեամբ,
Իրենց մատաղ միտք մշակեն ուսմամբ։

1888 Յունվար

ԱՇՈՒՆ

Գառ եւ անտառ տերեւաթափ,
Հեծեն ընդդէմ միոտ ցուրտ քամեաց.
Ծաղկունք դեղնած եւ գունաթափ,
Կը թօթափին մեզնէ ի բաց։

Թռչունք զուարթ երամովին,
Որ կերգէին ամառն ի բուն.
Նոքա եւրս կը բաժնուին,
Հրաժեշտի տալով ողջոյն։

Ա՛լ ծաղիկներ չունին գեղ, բոյր,
Ա՛լ պարտէզներ չունին պաճոյճ.
Դաշտ եւ հովիտ անհրապոյր,
Կը հեծեծեն միոտ անմրռունչ։

Գորշ, մթագոյն, սեւ սեւ ամպեր,
Երկնից երեսըն կըսփոթեն.
Եւ անձրեւի առաս շիթեր
Երկրիս վրայ ո՛հ... կը թափեն։

Հիւսիսային պաղ ցուրտ քամին
Ա՛լ կը փչէ ո՞հ... սաստկաբուռնչ.
Եւ ամեն ոք պատսպարուին
Ի ներքս տանեաց լո՛ւռ, անշշունչ։

Գիւղացին ալ վաստակաւոր
Հրաժեշտ տայ իւր արտերուն։
Բահ եւ բրիչ, մանգաղ, աւոր
Իւր հետ առած՝ դառնայ ի տուն։

Ծեր եւ մանկիկ, կին ու աղջիկ,
Ամենեքին ժիր փութաջան,
Զբաղում են լուիկ, մնջիկ,
Եւ ամբարեն պաշար ձմրան։

Իսկ ես, հէգըս, մելամաղձիկ,
Աչերս յառած դէպ բնութեան՝
Դիտեմ զաւերս տրմազգեցիկ,
Եւ անդրէն վիշտ իմ բազմանան։

1887 Նոյեմբեր

ԹՌՉՈՒՆ

—

Ճախրասլա՛ց թռչնիկ, դու գարնան սուրհանդակն ես, բնութեան վեհափառ տաճարին մելդաշնակ երաժիշտն ու երգեցիկ դպիրն են։ Ո՛վ անտառաց և օդոց սիրահնչիկ հիւր, ուր որ դայլայլիկներդ հնչեն, հոն կոծն ու կսկիծը իւր ողբերգը կը լռէ. մերթ մահաշուք նոճիներու սեւաստուեր կողերուն վրայ թառած կը ճռուողես, կարծես երկնքէն տարագիր պանդխտաց հրեշտակի մ՚ոգեակն ես. մերթ ծաղկոտ ու ծիծաղկոտ բլերց, մարգաց ու մարմանդից վրայ թառ ու դադար կառնուս. մերթ անջըրդի և անբեր անապատաց մէջ, և մերթ կոհակները խռովող փոթորկաց մռնչեան հետ ձայն կարձակես։

1885 Մայիս

Ի ՄԵՌ ՍԳԵԼԻ ՀՕՐԵՔԵՐՈՒՆ ԻՄՈՑ ՅԱՐԳԵԼԻ Տ. ՊԱՂՏԱՍԱՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

—

ԱՌ ԴՍՏԵՐՍ ԻՒՐ

Ա.

Ցուտ կորուսիք, աւա՜ղ, ձեր հայր խնամածու,
Հայր բազմերախտ, գորովալիր եւ թեկնածու.
Որ խնամեր ձեզ իւր թեւոց տակ հայրական,
Հոգ տանելով ձեր մտային լաւ զարգացման.
Պետն էր ձեր տան ազնուազարմ գերդաստանին,
Ի հընուտն այր անուանի՝ Ակնայ քաղքին.
Ցիչե՞մք արդեօք անցեալ փառքեր հանգուցելոյն,
Թէ ոչ ծածկենք զայնքս քօղով ո՜հ... սեւագոյն.
Զոր ի կեանս իւր երիտասարդ նա վարած էր,
Մինչ չունէր նա ճակատն խորշոմ, ա՛լեւոր հեր,
Կեանք մի վարէր մեծափարթամ և ճոխագոյն,
Իւր սեղանն էր միշտ հացալից առատագոյն.
Ծառայք կրկին հաւատարիմ բարեսպաս՝
Կազմ և պատրաստ հրամանին իւր հանապազ.

Բ.

Սակայն աւա՜ղ, մահն անգութ իւր սուր ժանեօք,
Խլեց ի ձէնջ կեանք մը ազնիւ թէպէտ տարեօք.
Խոցեց ձերին սրտերն մատաղ և նորարծարծ,
Որ դեռ այն ինչ իւր խնամքն էր փթթած.
Թողուց ի ձեզ վիշտ անմոռաց, կսկիծ անհուն,

Եւ կարտասուէք մշտահառաչ օրըն համբուն.
Լացէ՛ք այլ եւս, լացէ՛ք ձեր հօրըն արդ ի մահ,
Գիտեմ մեծ են ո՛հ... ձեր ցաւեր և քաշած ա՜հ.
Բայց ի՞նչ օգուտ, անգութ է մահրն և անդարձ,
Քանի՞ սրտեր խոցեց, խլեց, անցաւ, գնաց.
Գիտեմ, մեծ է ձեր կորուստն և թանկագին.
Հազիւ հանգչած էր նա վերջին իւր օրերէն.
Այլ վա՜հ, մահուան սուր գերանդին չուտ մերձեցաւ,
Հնձեց իւր կեանքն, և աշխարհէս նա մեկնեցաւ.

Գ.

Պէտք է սակայն մխիթարուիլ ա՛երբէք չը լալ,
Ցուսալով թէ իւրեան յաջորդ ձեր մեծ եղբայր՝
Ձեր քաջ տոհմին շառաւիղն բարեհամբաւ,
Արժանապէս պիտ՝ ժառանգէ, և ամեն ցաւ
Բառնայ ի ձէնջ, ձեր սրտերուն խիստ վշտահար.
Եւ ձեր աչաց դառն արտասուք որ անդադար,
Միշտ կը հոսի, պիտի որբէ տնո՜ւշ, մեղմով.
Պիտ՝ խնամէ ձեզ հայրաբար ընդ իւր բազկով.
Ուրեմն այլ եւս ձեր արտասուաց տուէք դադար.
Միայն ձեր հօր տխուր շիրմին յանշուք սընար,
Վարդէ փունջ մի դրէք ծաղկեայ կամ մի պսակ.
Որով պատուած լինիք ձեր հօր քաղցր յիշատակ.

1889 Ապրիլ

Ա. Ռ. Պ. ԿԱՐԱՊԵՏ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՀԱՌԱՋ ՄԻ

—

Բաղդին բերմունք չարադէպ որ՝ տաճ կսկիծ՝
Բաժնեցին զիս, նժդեհս հէգ, քեզանից·
Անկայ յուղի, գնալ ի տար աշխարհ՝ ուր
Զիք բընաւ սէր, ժպիտ եւ վարդըն ի բոյր·
Զը կան առուակք քաղցր ի կարկաչ հեզաւէտ
Զը կան նոճիք բարձրագլուխ շքաւէտ·
Գացին թռչունք ձմեռելու իւրեանց տեղ,
Զը կան սոխակք, որք դայլայլեն սիրագեղ։

Զմե՛ռն կարծես ո՞ւ... շուտ հասաւ ինձ համար,
Եւ վերջ տուաւ բոլոր ըղձիցս անհամար·
Զմեռ տխուր, երկարատեւ բքաբեր,
Ուր միշտ փչէ քամին սաստիկ ձիւնաբեր·
Ողջոյն բնութիւնըն երեւի ամպամած
Իւր զարդերէն բոլորովին մերկացած·
Ձիւն եւ սառոյց ամեն ուրեք կը պատեն
Մարդիկ համայն իրենց տունը քաշուած են։

Իսկ ես նստած յափունս սիրուն Վոսփորի,
Դիտեմ անյագ ըզծովն որ մերթ կը կատղի·
Ցուզուին ալիք, ձայն արձակեն մըռընչեան,
Եւ գան փշրիլ յոտըս ժայռից ցիր ու ցան։
Անդ կերազեմ եւ կը խորհիմ մտովի,

Եւ մերթ յուզուիմ ի յիշատակս սրգալի·
Ցիշեմ ըզքեզ թէ ինչո՞ւ չեմք միասին,
Ցայնժամ վիշտքս սրտախոցիկ նորոգին։

Էր դու այդպէս միշտ հեռի կաս յինէն յար,
Օտար երկրում տխուր մենիկ վշտահար·
Զերդ մենակեաց քաշուած ի վանս ամայի,
Կամ աբեղայ մ'աղօթարար սրգալի։
Կանցունեաս անդ օրերդ հանդարտ եւ խաղաղ,
Մշակելով հէգ մանկտւոյն սիրտ մատաղ·
Զարգացընեաս ըզմիտս նոցին բեղմնալից՝
Հրահանգօք եւ խրատիւք օգտալից։

1887 Նոյեմբեր

ԱՃԻԻՆԱՅԱԾ ԹԱՂՔ

—

Բարեկենդանի եօթնեկին մէջ էր, երբ ամէն ոք ի խնդ և ի խնծիլ բերկրանաց մէջ արբեալ շուարեալ էին· երբ չրջակայ միւս թաղերու բնակիչք խըրախճանութեան տօներ ու հանդէսներ կը կատարէին· երբ դէմքեր ու դիմակներ — նորանշան երեւոյթներ — իրարու կը յաջորդէին· երբ զուարճասէր երիտասարդներ միմոսական անհեթեթ ձեւեր առած՝ ծիծաղաշարժ տեսարան մը կընծայէին· յանկարծ բոցերու ահեղ ճարճատիւն մը գրեթէ ողջոյն թաղն մոխիր դարձուց։

Վարդանանց Տօնի հինգշաբթի առաւօտն էր. դեռ խաւարն անջրպետին մէջէն չհալածուած, բնակիչք խոր քնոյ մէջ ընկղմեալ՝ խաղաղիկ կը մրափէին. յանկարծ աղէտալի լուրը բօթաբեր գուժկանի մը նման կայծակնաթափ հասաւ իրենց ականջին, և նեռի նըման խոցեց Հայոց սրտերն՝ ընդոստ զարթուցանելով զնոսա։ Ամենեքին իրար անցած, մայրեր հերարձակ և աղջկունք մերկոտն և շուարած կը ճչէին, հարցնելով իրենց մօր. — «Մայրի՛կ, ի՞նչ կայ, ի՞նչ է եղեր — ելի՛ր կերինք կոր» և այլ սրտաճմլիկ աղաղակներ, որոց արձագանգն կը լսուէր հեռուն։

Հրդեհն կը յառաջանար տակաւ և նման աշխարհաւեր բռնակալի մը մահ և կոտորած կը սփռէր ամենուրեք։ Բոցերու թռուցիկ կայծեր՝ նման հրեղէն գնդակներու տարածուելով ամէն կողմ, ամէն տանիքներու վրայ, կը կործանէին ահագին շէնքեր, ահռելի ճարճատմամբ. մինչ բանիւ սպառիչ տարրն՝ սփռելով յընդհանուրս, անխնայ կայրէր կը լափլիզէր ամէն բան մեծատունէն սկսեալ ցՅետին տնանկին հիւղն։ Ողջոյն թաղն հայաբնակ՝ հրեղէն Ովկէանի մը փոխարկուած կը ծփծփար և կալեկոծէր հրակոհակ մեծաձայն մռնչմամբ։

Մայրեր՝ ողբակոծ և խառնակ մազերով՝ կորոնէին իւրեանց մանկիկներ, և աղջիկներ արտասուաթոր, կիսահագուստ կական բարձած՝ աղէկիզիկ ձայներով օդը կը թնդացնէին. նորահաս տղայք ու ժիր երիտասարդներ չփոթած ամէն դիւց օգնութիւն աղաղակելով՝ և մերթ քաջաբար խիզախելով հրդեհին վայրն՝ մաղապուր կը զերծանէին տղաքներ՝ որք թերեւս քիչ յետոյ համայնակուլ աղէտին մէն մի զոհերը պիտի լինէին. արդարեւ մեծ առաքինութիւն և վը-

սեմ գործ. բայց ի՜նչ օգուտ, անողոք տարրն կը յառաջանար, յամիւն դարձնելով ամէն իր, մինչ իսկ մարդկային էակներ. եւ որ արտասուալին է՝ կայրէր Հայոց Հայկանուշեան վարժարանն, ապագայ յոյսն ու լոյսն գեղեցիկ սեռին. իմաստութեան տաճարն այն չքնաղ՝ որ կը վառէ՛ր, և կը քայքայուէր առ տակաւ 6 ½ ժամուան մէջ այրեցաւեր դարձնելով այդ թաղն հոյակապ։

Ողբա՜մ զքեզ, ո՛ Եէնի-Գաբու, անհուն յիշատակներով լի. քանի՜ քանի՜ գիշերներ արդեօք քո հանդարտիկ փողոցաց մէջ ճեմ առած կը շրջագայէի մենիկ և մտախոհ, գիշերոյն խորհրդաւոր լռութեան մէջ, լուսնին պայծառութեան ներքեւ։ Քանի՜ քանի՜ մանկական յիշատակներ և պատանեկան երազնե՛ր կը խառնվեն արդ հոգիս, երբ կը յիշեմ անցեալն. ո՜հ, անցեա՜լն այն մթած։ Կաղանդի և Ծննդեան գիշերներ՝ երբ եկեղեցւոյ պղնձակուռ զանգին մեղմ զողանջիւնը կը հնչէր մեր ականջին, վաղայարոյց զարթուցեալ, կը փութայի այդ յարկն աստուածեան բիւրաւոր կանթեղներով լուսազարդ, ի լուր քահանայից հոգենուագ շարականներուն և դպրաց քաղցրաձայն մեղեդիներուն։

Մեծ պահոց կիրակիներ, երբ Դիմաքսեան Սրբազան (յայնժամ քարոզիչ թաղին) իւր սրտառուչ և հոգենորոգ քարոզներով՝ կը դողացնէր այդ սրբազան բեմն, դարձեալ կը փութայի լսել զինքն և հիանալ։

Ո՜հ, այրեցաւ այն վարժարանն՝ ուր իգական սեռին նորածիլ ծաղկունք կը փթթէին... աւա՜ղ. հիմնայատակ տապալեցաւ այդ հսկայ շէնքն որ մերթ քննութեան հանդիսաւոր աւուրց մէջ եւ այլ կրթական հանդէսներու ատեն, հաղարաւոր ժողովուրդ յիւր ծոց կը խռնէր և կը զմայլեցնէր։

Արդ՝ աւերակաց կոյտ մը դարձած և բուեր իւր վրայ թառած կեղերերգեն, ողբալով զիւր փառաւոր անցեալ։

Ափսո՛ս, անցա՛ն այդ ամենը. և միայն սեւ յիշատակաց բեկոր մը սրտիս վրայ հանգչած՝ կը տանջէ զիս յարաժամ և հառաչիցս խուլ մռունչն հեկեկանաց ձայնի մը հետ խառնուելով՝ արտասուոռոգ հատկըլեալ կըսեմ իւրովի. — «Այսպէ՞ս պիտի լինէր ուրեմն քո վախճան, ո՛ անուշիկ և սիրեցեալ թաղ»։

1892 Մարս

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒՐԻՆ ՅԵՓԵՍՈՍ

—

Գարունն իւր առաջին համբոյրներն դրոշմած էր լերանց, ձորոց, հովտաց ու դաշտօրէից վրայ. Ապրիլն գեղեցիկ եւս կը գործէր՝ խնկաւէտ զեփիւռ մը սփռելով ամենուրեք։ Քաղաքն այլ ևս նեղ կուգար մեզ, իւր բիւր հրապոյրներով. և լայնարձակ դաշտօրէից հեշտաբոյր օդն վայելել կուզէինք. ընդոստ դուրս խուժելով մեր սենեակներէն՝ յորում ամբողջ ձմեռն փակուած մնացած էինք. պահ մ'ալ ազատ օդ շնչելու. հանգչելով ի ծոց անոյշ բնութեան՝ ուր սոխակին դայլայլն կը գգուէ մեր ականջներն հեշտին։

Գեղեցիկ ճամբորդութիւն մ'ըրինք դէպ յ'Այասուլուք, այն պատմական քաղաքն՝ որուն աւերակներն ցարդ դրած են յուխտ և ի զբօսանս։ Արշալուսին մեկնեցայ շոգեկառքով՝ ընկեր ունենալով ինձ տեղւոյն քահանայն։ Վայրաշարժն սուլեց և կառախումբին անիւներն սկսան թաւալիլ երկաթեայ գծերուն վրայ. ճամբայ ելանք. սակայն շոգեկառքն չէր ընթանար այնչափ արագ՝ որչափ պիտոյ էր. հետզհետէ կ'անտեսէին մեր աչքէն դաշտեր, լեռներ, և արտօրայք մշակեալք և հունձքերով ծանրաբեռնած. բնութիւնը վերակենդանացած և ամենուրեք դալարութիւն։ Կայարաններն կը յաջորդէին միմեանց, որոց առջև տասն վայրկեանէն աւելի կանգ կառնուր. վերջապէս 1 3/4 ժամէն հասանք Այտընի կայարանն՝ կամ Կիւզէլ-Հիսար, ուր կուտակուած էր համազգեաց ամբոխ մը՝ խառն ի խուռն, զգեստիւք և տարազներով զանազանուած։ Մի քանի Այտընցի հայ տիկիններ՝ իրենց մատաղ որդւովք մեր վակօնը մտան. բարեւեցինք զանոնք. խիստ գոհ մեր քաղաքավարական ձեւերէն, շնորհակալութեամբ պատասխանեցին և անկիւն մը զետեղուեցան։ Ասոնք ալ մեզ նման ուխտաւոր էին, որ կերթային յԵփեսոս. այսպէս մեր ճամբորդութիւնը զուարճալի դարձաւ, որ քիչ մ'առաջ տաղտկալի էր. բարեկամացանք իրենց հետ. հաճոյալի խօսակցութեամբք մեր ժամերը կը սահէին անզգալաբար, մինչ կառաշարն Պալաթճիք կը ժամանէր ուժգնակի սուլմամբ, ահա կայարան մ'եւս, որուն կը միանայ Սէօֆէի գիծն յատուկ ճամբով, հոն ալ բազմաթիւ ընտանիքներ Սէօքէբնակ հայոց, գրեթէ իրենց ամբողջութեամբ կսպասէին՝ ի չու։ Բացուեցան շոգեկառքի դռնակներն՝ ներս ընդունելու համար այս նորեկ ուխտաւորուհիք։ Ձերկարեմ, մէկ ժամէն աւելի սպասեցինք հոն, և յետոյ ճամբայ ե-

լանք, կտրելով դաշտերն անծայրածիր. և ահա լեռնագագաթի մը, բարձրաբերձ բլուրներ՝ որք իրենց ամաչք մերկութեամբն ահարկո՛ւ. իսկ քիչ հեռուն փապուղին, որ մէջէն պիտի անցնէինք. թէեւ շոգեկառքով, բայց և այնպէս երկիւղալի. յանկարծ տիւն գիշերուան փոխուեցաւ, խաւարն տիրեց, որ սակայն հինգ վայրկեանէն աւելի չտեւեց. վերստին լոյս աշխարհ եկանք. ուրախութիւնն ընդհանուր էր. և ահա ուրիշ փապար մ՚ալ խաւարային, բայց խիստ կարճատեւ։ Լո՜յս, մթութի՛ւն, կրկնակի կը յաջորդէին միմեանց. երկաթին հակառակ տարրեր՝ որք գոգցես բաժնուել չեն ուզեր իրարմէ. գիշերը՝ մերձ տուընջեան, կենաց մօտ՝ մահը...։

Միջօրէին կէս ժամ առաջ հասանք յԵփեսոս, որու կայարանը զարդարուած էր Օսմ. ու Եւրոպական դրօշներով. օրուան տօնին առթիւ, ուխտաւորաց հոծ բազմութիւն մը կը գրաւէր անդ. պահիկ մը հանգիստ առնելէ զկնի անկանք յուղի։ Օդը պայծառ ու գեղեցիկ էր. բայց միջօրէի արեգը կայրէր զմեզ. մեր դոյքերը ձիապանի մը յանձնելով ուզեցինք հետի գնալ, վասն զի ճանապարհը կարճ էր. և անցնելով մարգաց ու արտօրէից մէջէն, նուազ յոգնեցուցիչ զառիվերէ մը բարձրացանք լերան կատարն մէկ ժամէն, ուր վրաններու ցանցառ թիւ մը կը հովանաւորէին խոտաւէտ լեռնադաշտն. մէկ կողմն քարաշէն խորան մը՝ ցածկէկ, անպատսպար, միայն վրանով մը ծածկուած, կառուցեալ յանուն Սրբոյն Յովհաննու Աւետարանչի, որուն գերեզմանը հոն է կըսեն, բայց ոչոյգ վկայութիւն մը չկայ. հակառակ իւր բարձր և զուարճալի դիրքին՝ ո՛չ ծառ կայ և ո՛չ աղբիւր։

Հարիւրաւոր ուխտաւորաց բազմութիւն գունդագունդ կը դիմէին անդ, շրջակայ հայաբնակ թեմերէն, մանաւանդ Իզմիրէն։ Պերճաշուք տիկիններ, գեղանի օրիորդներ, մինչ իսկ կորաքամակ ծերեր. ամենքին եռանդոտ, զուարթագին, ոմանք հետիոտն, այլք ձիաւոր հետզհետէ կը փութային լեցնելով վայրն ամայի։

Գիշերն անքուն անցուցինք. զի անհնարին էր մեզ ննջել. նուագարանաց ձայներ և այլ խժալուր աղմուկներ իրենց արձագանգներն կը հնչեցնէին հեռուն. քիչ մ՚անդին հրթիռներ, հուրն բոցավառ կը ծառանար դէպ յերկին՝ անհունին մէջ. փամփուշտներ, տարճանակներ, իրենց պայթիւններով տակաւ մեր ականջներն կը խլացնէին, կը վրդովէին և տեսակ մը ոգեւորութեամբ կը լնուին։ Զարմանալի էր տեսնել Մշոյ դաշտի գիւղացւոց տարօրինակ պարն քրդական եղանակներով, ձեւերով ու դարձուածներով, որք կը գրաւէին հետաքրքիրներու ուշն։

Հետեւեալ առաւօտ արշալուսին այցելեցինք լերան ստորոտը գտնուած քարայրն՝ որ հնութեանց տեսակէտով նշանաւոր է։ Հոն պահուած կայ կըսեն, շատ մը թանկ նիւթեր՝ մարմարէ արձաններ, սիւներ, քարակոփ սենեակներ, սնտուկներ՝ միապաղաղ մարմարէ. վերջապէս խորն կամուրջ մը՝ մարմարաշէն, որու ներքեւէն գետակ մը կը սահի, կանցնի կերթայ, բայց չգիտցուիր թէ ո՛ւր կը յանգի. ստոյգիւ զարմանալիք և ճարտարարուեստ գործ. բայց դժբաղդաբար չկրցինք մեր աչօք տեսնել, զի կարի երկիւղալի է անցքը։ Իսկ կայարանի մօտ բերդն, փլատակ մզկիթն, և տակաւին հնութեանց մնացորդներ, աշտարակաց կիսակործան սիւներ, որք արդարեւ կը հիացնեն հետաքրքիր ուղեւորն։

Բաժնուելով այրէն դարձանք ուխտատեղին, ուր քահանայն կը պատարագէր. հո՛ն, վրանին տակ, ի ներկայութեան խուռն ժողովրդեան, կին, աղջիկ, ծեր, տղայ. ամենեքին երկիւղած, ջերմեռանդ կը ծնրադրէին Յաւիտենականին առաջ։ Կարելի չէր սակայն երկար ատեն մնալ այդ վրանապատ տաճարին մէջ. ուստի դուրս ելանք քիչ մ'օդ ծծելու։ Ցեռոյ քանի մը ընկերներով բարձրացանք լերան գագաթն՝ պարսպին վրայ, ուստի ծովն իւր գեղածիծաղ դէմքն կը ցուցնէր ի հեռուստ։ Մէկ կողմն լեռներ, բլուրներ, գալարաղարդ հովիտներ ու արտօրայք, զորս Գարունը պճնազարդած էր. միւս կողմն ալ կապոյտ ծովն՝ աննման, հեղածաւալ, կողմնակի լերանց մէջ ընկղմանեալ, հանդարտիկ կը ննջէ. բայց հողմն սասակաչունչ, ուժգին կը մղէ, կ'արգելու զմեզ քիչ մ'եւս վայելել բնութեան այդ սքանչելի տեսարան և կը հալածէ պարսպէն վա՛ր, դէպ ի վա՛ր մեր գեղջկական հովանոյն տակ։

Վերջապէս երկուշաբթի առաւօտ մեր հրաժեշտի ողջոյնը տալով այդ հնօրեայ քաղաքին, սուրհանդակի շոգեկառքն արագաթռիչ հեռացուց զմեզ այդ վայրէն, քաղցր տպաւորութեան մը ներքեւ. և միջօրէին հասանք Նազիլի, ուր հանգչեցան մեր խոնջեալ անդամներ։

1892 Մայիս

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Օրհնասական երիտասարդին

—

Մնա՛ք բարեաւ, աշխարհ, ա՛րեւ և դո՛ւ սիրապատա՛ր կեանք։ Աւա՛ղ, կենաց ջահը վերջապէս պիտի մարի գերեզմանաց սեաւ անդունդին մէջ, նման այն ծաղկին, որ դեռ ամբողջ չբացուած իւր ցողունին վրայ վաղամեռուր կը թարշամի։ Բարէ՛, ի՞նչ է մարդ. — տերեւ մը, որ ցրտաշունչ քամիներ ոստէ յոստ, ճորէ ի ճոր, հովտէ ի հովիտ, կը վարէ, կը տանի յու պէտ՝ յու կամ։

Ուր որ մարդ երջանկութիւն սերմանեց, հոն միշտ փուշ բուսաւ. արշալոյս ու վերջալոյս տեսնող ծաղկի մը նման դիւրաթարշամ թօշնեցայ։ Ցիշեցէ՛ք զիս այլ եւս, ո՛ անուշիկ հողմեր, երբ անտառին մէջ նուագին ձեր անուշիկ ձայներ։ Պահեցէ՛ք յիշատակը, ո՛վ երկնագեղ ծաղկունք, ձեր անուշաբոյր խընկոց մէջ. ո՛վ ծառեր, հովուտ ստուերաց մէջ, ուր յաճախ ոսկի երազներով օրորուած՝ մտածումներու մէջ ընկղմուած քաղցրանինջ կընկողմանէի. յիշեցէ՛ք թէ յաճախ արցունքներս յիշատակ մ'ունին ձեր մէջ։ Հրաժեշտ նոքա ի ձէնջ, ո՛ գեղեցիկ նշոյլներ, որ ըստէպ արցունքիս ու խնդումիս մէջ փայլեցաք. և դուք սիրելի բաբեկամք, ընդ միշտ ձեզմէ բաժնուելու դժբաղդութիւնն ունիմ. եկէ՛ք մենիկ ու միայնիկ, լուռ ստուերաց և համր ատեղաց աղօտ շու-

չանին հետ հեծելու և հծծելու չիրմիս վրայ, ուր աւա՛ղ, կենացս առաւօտը գերեզմանաց արեւմուտքին մէջ պիտի չիջանի։ Եւ դու սիրելի մայրս, հոգեհատոր քորք իմ և եղբարք, գիտեմ թէ ձեր աչաց առջեւ, ձեր ծնգաց վրայ պիտի թառամի կենացս մատղաշ ծաղիկը, չիցէ՞ թէ արցունքներով դառնացընէք, այլ ծունգ մ՚աղօթք, փունջ մը ծաղիկ չա՛տ խիկ են յիշատակ պատուելու։

1884 Սեպտեմբեր

ԴԱՄԱԿ

Սիրելի մայր իմ,

Այն տխուր պահուն՝ յորում զձեզ ի Սուէզ տանող շոգենաւն անդնդալիւղ անհետանալու վրայ էր, և հեռու հորիզոնին վրայ կապոյտ ստորակէպի մը նըման կերեւէր, յայնժամ սիրտս փղձկեցաւ և արտասուաց երկու ջերմ կայլակներ՝ թարթիչներս թրջելով այտերս ակօսեցին։

Ընդ միշտ ձեզ կը խորհիմ. երբ արշալոյսն ամեն առաւ ողջունել կը դայ զիս, ձեր ու ձեր յիշատակական երաղներով խառնվեալ հոգւոյս աղօտ անսաւոգութիւնը փարատելու եւեթ կը ծառայէ։

Ամեն երեկոյ՝ երբ արծաթափայլ լուսինը Ովկիանու յաղթաջուր ալեաց մէջէն ի վեր անդր ի հորիզոն

կամբառնայ, գիշերուան աղջամուղջը թափանցիկ դարձելու համար զքեզ կերազեմ. յաճախ լուսնոյ ճառագայթներն իմ արցունքներուս մէջ փայլած են ու կը փայլին։

Մա՛յր, դուն գացիր, կարծես ամեն բան հետդ տարիր, երկինք կը նայիմ աստղերուն մէջ. և անուշադ կարդալ կանձկամ. ծովուն կը նայիմ և անոր մէջ ի զուր քու պաշտելի պատկերդ կորոնեմ։

Մա՛յր, դեռ պիտի քաշե՞մ քո կարօտն, ե՞րբ պիտի բուժին քո ցաւեր, մա՛յր, հիւանդութիւնդ՝ հոգիս սգաւոր, որը և այրիի նման սեւաւորած է. սրտիս մէջ ցնծանաց առուակներն ցամքեցոյց. հրճուանքներն ամբողջ թառմեցոյց, որպէս կը թառմին ծաղիկներ, ամրան տօթակէզ խորշակին տակ՝ բուրաստանի մը մէջ։

Մա՛յր, խնդրեմ, շուտ և շատ գրեցէ՛ք ձեր տողերն. զի որչափ զձեզ շատ կարդամ, այնչափ հաճոյք կըզգամ. կարօտդ զիս կը մաշէ. երբեւ բանաստեղծ քու անունն կը սիրեմ գրուատել. նկարչի նման ամեն օր մտքիս պաստառին վրայ. հոգւոյս հայելւոյն մէջ քո պատկերն կը նկարեմ։

Վերջապէս մէկ խօսքով մէկ մտածում միայն ունիմ, զոր սիրտս շատ կը հիւծէ և զոր չկարենամ լռել և ոչ երբէք. և այդ մտածումն ու կարօտը դուք և միայն դուք էք։

1884 Մարս 24
Կ. Պոլիս

Անձկայրեաց որդիդ

* * *



ՊԱՏԱՍԽԱՆԻ

Սուէզ, 16 Ապրիլ 1884

Պաշտելի զաւակս,

Գարնան սոխակի մը անոյշ ճվվլումին նման ազդեցին սրտիս սրտառուչ սիրալիր խօսքերդ և վսեմ ըզգացումներդ։

Զաւա՛կս, մտադիր էի տակաւին մնալ ի Սուէզ, բայց քու առ իս ունեցած կարօտն և զիս քեզմէն տեսնելու տարապայման բաղձանքդ՝ կը հարկադրեն որ փութացնեմ իմ դալուստս։

Զաւա՛կս, զքեզ այնչափ կը սիրեմ, որ եթէ հնար լինէր, ամեն օր թռչուններն ու հողմերն ինձմէ առ քեզ պատգամաւոր պիտի ընէի։ զքեզ ամեն ատեն կը յիշեմ, և քո պատկերն իբրեւ նուիրական նշխար հոգւոյս պահարանին մէջ կը պահեմ. և մինչեւ իսկ երբ միայնութեանս մէջ բաժակ մը ջուր ըմպեմ, բաժակին յատակը մնացած կաթիլին մէջ քու պատկերդ կորոնեմ։

Զաւա՛կս, մի՛ մաշեր սրտիկդ, որդիական գորովագութ սրտի ցաւերով. մինչեւ ցարդ կը սիրէի ը՛քեզ, զաւակս, բայց այսուհետեւ կը պաշտեմ. քո բացատրածներդ զգացումներ չեն, այլ հոգւոյդ ը՛բուրվառին կնդրկաբոյր խունկերն են։ Ապրի՛ս զաւակը՛ս, ո՛չ հարստութեանցս, ո՛չ գոհարներուս և՛չ ճոխ ժառանգութեանցս վրայ պիտի պարծիմ մ՛ինչափ՝ որչափ քու վրայ։

Զաւա՛կս, քեզմով պիտի լինի իմ տունս պալատ մը... մեր ընտանեաց պատիւն ու փառքերը ես պիտի բարձրանան ու տարածին և ես քեզմով պիտի լինիմ այն երջանիկ մայրը՝ զոր ամեն տեսնողներ մատնանիշ պիտի ցուցնեն և երանեն ըսելով. — Ահա մայր որդւով բերկրեալ։

կարոտակէզ մայրդ

* * *

Դերապատիւ Սրբազան Հայր

եւ Ցարգոյ Հանդիսականք (*)

Քաղցր պարտք մը կը համարիմ ինձ արտայայտել սրտիս զգացումներն սոյն կրթական հանդիսին մէջ, ուր անհամբեր կսպասէի ի վաղուց, և ահա առիթը կը ներկայէ ինձ, այսօր վայելելու երջանկութիւնն ունենալ Սամաթիոյ բազմահայ թաղին մտաւորական բուրաստանին փրցանակահանդէսը։ Առ այս չեմ մոռնար իմ խորին շնորհակալիքն յայտնել Պատ. Թաղ. Խորհրդոյ և մեղուաջան Հոգաբարձութեան՝ որք անդուլ և անխոնջ կաշխատին սոյն կրթական կրկնակի հաստատութիւնները նախանձելի վիճակի վերածելու։ Շնորհակալի՛ք նաեւ կրթասէր ծնողաց ոմանց և ազնիւ հանդիսականաց, որք իրենց ներկայութեամբ պատուել բարեհաճած են զերկսեռ ուսանողս։

Ինչպէս գիտէք, Տիրուհիք և Տեարք, գիտութիւնն է որ կազնուացնէ զմարդ և առանց անոր ո-

---

(*) Սամաթիոյ վարժարանին մէջ խօսուած.

չինչ կարելի է լինել յաշխարհի։ Նախնի դարուց յոյն իմաստասէրք՝ Արիստոտէլ, Պլատոն, և այլք գիտութեան առջեւ ամեն ինչ կը զոհէին. — աւագութիւն, հարստութիւն, ճոխութիւն, գանձ և փառք և այնպէս համոզուած ու վճռած էին թէ առանց գիտութեան կարելի չէ մարդ երջանիկ լինել յաշխարհի։ Ի՞նչ հարկ ի հնուց մեզ օրինակներ բերել, քանի որ քաղաքակիրթն Եւրոպա մեծ քայլեր կառնէ ներկայիս մէջ, չնորհիւ ուսման և գիտութեան, այց համասփիւռ ճիւղերն կը տարածուին օր քան զօր ի քառածագս աշխարհի. մինթէ անտարբե՞ր պիտի մնամք Հայքս սոյն տիեզերական շարժման հանդէպ. ժամանակն իսկ իւր սրաթռիչ նետերով կը յիշեցնէ մեզ Լոյս և Գիտութիւն։

Որքան փափաքելի, այնքան նուիրական է ինձ, երբ կարգը կը գայ խօսիլ ուսման վրայ. մանաւանդ այսպիսի հանդիսի մը մէջ, ուր շուրջս բոլորուած կը տեսնեմ ամեն դասակարգերէն ազգայնոց խուռն բազմութիւն, որք դիմած են իւրաքանչիւրն խնդագին՝ մասնակցիլ իրենց զաւակաց ուրախութեան։ Ոմանք յօրիորդաց պսակ ի գլուխ ի հրճուանս, հրեշտակային ներդաշնակ երգերովն առաւել շուք մը կընծայեն հանդիսին. ո՞րպիսի անպատում ուրախութիւն է ծնողի մը համար՝ երբ տեսնէ իւր որդեակն բոլորուած իւր ընկերներէն՝ կզգայ այն հաճոյքը, զոր երբեմն զգացած ենք մենք մանկութեան երանելի ժամերուն մէջ։ Ի՞նչ շուտ սահեցան այդ երջանիկ օրեր. ուր ո՛չ վիշտ կիմանայինք և ո՛չ թախիծ. հրճուանք և ուրախութիւն էր միայն մեր խաղն և մտածում. Արդ պէտք է խորհինք և ճանչենք մեր պարտքը. վասըն զի գործելու ժամը կը հնչէ, փութանք Տեարք և Տիկնայք, վարուիլ այնպէս, որպէս կը պահանջէ

ժամանակն. այսինքն յանձնենք մեր զաւակունքն ուսմանց յարկերու, որպէս են ազգային և մասնաւոր վարժարանք, ուր կը մարզին նոքա ի հրահանգս գիտութեան և բարոյականին. յորոց պիտի ճառագայթէ մի օր մեր կենաց յուսոյ և լուսոյ աստղն նորանշոյլ և իբր լուսաբեր այդ՝ պիտի ցոլայ ու ցոլացընէ ազգութիւնն ողջոյն։

Քանի մը խօսք ալ Սամաթիոյ անցելոյն վրայ. որ մեծապանծ է իւր յիշատակաւն, որպէս փայլուն՝ իւր գործերովն։ Ինչպէս գիտէք, սոյն կրկին վարժարանք արդիւնք են Սամաթիացւոյն անձանձիր գործունէութեան և ժիր աշխատութեան. որովք կը ցուցնէ թէ ինքն Պօլսոյ յառաջդիմասէր թաղերէն մին է. երկրորդ՝ իւր վարժարանաց հասուցած բազմաթիւ աշակերտներովն, որք այսօր կարեւոր պաշտօններու մէջ կը ծառայեն, համեստ և ուսեալ օրիորդներ, որք ընտանիքներ կազմած են, նոյնպէս արդիւնք են սոյն վարժատան։

Ցոյս մեծ է իմ, որ ինչպէս յանցելումն, նոյնպէս և յառաջիկային մեծ արդիւնքներ պիտի ընծայէ Ազգին սոյն կրթարան. եթէ անվհատ յարատեւէք ձեր դովելի սկզբան մէջ. անտարակոյս եղէք, ո՛ կրթասէր Սամաթիացիք, թէ ձեր իղձերն լիուլի պիտի պսակուին. և ինչ որ կը սերմանէք այժմ, նոյնը պիտի հնձէք յապագային, մի գուցէ երկմտիք թէ երկինք զմեզ վարձահատոյց չըրաւ, աշխատեցէ՛ք և պիտի վայելէք ձեր քրտանց պտուղն։

1885 Օգոստոս

ՎԵՐՋ

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

ԱՐՁԱԿ

Երես

1. Առաւօտ 10
2. Ասուած անբանից գոմին մէջ 56
3. Առ Պ. Տ. Շալնեան 59
4. Անիւնացած բաղը 77
5. Դպրոց 16
6. Երկու վաղազրաւ հանճարներ 31
7. Թռչուն 73
8. Հրդեհումն Տրովադայի 21
9. Հրդեհ 65
10. Ճառ 89
11. Նամակ 86
12. Ուխտագնացութիւն յԵփեսոս 80
13. Պադխին կեանքը 45
14. Վերջին խօսք 85

ՈՏԱՆԱՒՈՐ

1. Առ Գեր. Առաջնորդն Զմիւռնիոյ 11
2. Առ կոյսն Նազելի 13
3. Առ մտերիմն իմ սիրելի 23
4. Առ օրիորդ Անանիկ 41
5. Առ դեռատի աղջկունս 55

Երես

6. Առ մօրեղբայրն իմ 49
7. Առ Պ. Կարապետ Թովմասեան 76
8. Առ Պ. Ս. Փափազեան (Տ. Շալնեան) 39
9. Անձկանք սրտի (» ») 61
10. Աշուն 71
11. Գոհարիկ 7
12. Գարուն 19
13. Գեղջկուհին 67
14. Գարուն 44
15. Երգ մանկանց 10
16. Ես զքեզ յիշեմ 36
17. Ի մահ սգալի մեծ մօրն իմոյ 37
18. Իմ կեանքը 46
19. Ի մահ սգալի հօրաքեռաւն իմոյ 74
20. Լուսին 30
21. Կոյսն զուարթ 26
22. Հրաժեշտ առ ուսանողս իմ 58
23. Մտածեմ զքեզ (Տ. Շալնեան) 25
24. Ցանդիմանութիւն առ սոխակ 48
25. Ցիշատակ մը 14
26. Ցուշք անցելոյն (Տ. Շալնեան) 51
27. Նոր Տարի 69
28. Շուշան 35
29. Ցիր մ'արտասուք 17
30. Պանդուխտն առ բոչուն 28

ՎՐԻՊԱՆԵՐ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
5	17	իրաքանչիւրն	իւրաքանչիւրն
15	3	որպէս	սրտէս
15	13	մ'ունիմ	մ'ունին
26	14	բուրատանին	բուրաստանին
43	13	յանմիկ	յայնմիկ
67	3	երանց	Լերանց

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Նուէր Կաղանդի (*ապառաժ*) 2 դրգ.

Գրական Տիպեր 4 »